

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2(52)
2011 թ.

Գլխավոր խմբագիր՝
Լևոն Օհանյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան -

գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան

Սերգեյ Առաքելյան

Վիգեն Քոչարյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավաբանական ֆակուլտետ:

Ֆեռ. 55-77-92

*Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:*

*10 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:*

e-mail: petutyun.irav@gmail.com

Դասիչ՝ 77771

Տպագրական 7 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

1.07.2011

Հանձնված է տպագրության

14.07.2011

СОЮЗ ЮРИСТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**ГОСУДАРСТВО
И
ПРАВО**

Номер 2 (52)
2011 г.

Главный редактор:
Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА

Редакционный совет

Самвел Дилбандян -
зам. главного редактора
Давид Мелконян -
ответственный секретарь

Геворг Даниелян
Гагик Амбарцумян
Артур Вагаршян
Сергей Аракелян
Виген Кочарян

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 55-77-92
e-mail: petutyun.irav@gmail.com

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 1.07.2011
Подписано к печати 14.07.2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Քննարկման մասին4

Արա Գաբուզյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ
ՕՐԵՆՍՐԳՐՔԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ9

Դավիթ Ավետիսյան

ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՐԳՐՔԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿՑՎԱԾ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ.....18

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Աննա Վարդապետյան

ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՄԱԿԱԾՔՆԵՐԻ ՓՈԽՊԱՏՎԱՍՏՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ
ԱՌԱՆՁԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ.....28

Քրիստինե Արսենյան

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՆԻՑ ԿԱՄ ՊԱՏԺԻՑ ԱԶՏՆԵԼՈՒ ՎԱՂԵՍՈՒԹՅԱՆ
ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ.....38

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Արթուր Ղամբարյան

ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱԿԱԿԱՆ
ՀԻՄՔԵՐԸ.....49

Սերգեյ Մարաբյան

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՅՑԸ ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ60

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սերգեյ Մեղրյան

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....72

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Аида Искоян

ЭКОЛОГИЗАЦИЯ ПРАВОВЫХ НОРМ КАК НЕОБХОДИМАЯ ПРЕДПОСЫЛКА
ЭФФЕКТИВНОСТИ ДЕЙСТВИЯ ЭКОЛОГИЧЕСКОГО ЗАКОНОДАТЕЛЬСТВА.....86

Հեղինե Հախվերդյան

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՄԵՆԱՆԻՋՄՈՒՄ93

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Լիպարիտ Դրմեյան

ՖՐԱՆՀԱՅՁԻՆԳԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ.....100

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Эдгар Хачатрян

МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫЕ АСПЕКТЫ ПОЛНОМОЧИЙ И ДЕЯТЕЛЬНОСТИ
СОВЕТА БЕЗОПАСНОСТИ ООН В ОБЛАСТИ ПООЩРЕНИЯ ДЕМОКРАТИИ.....108

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Դավիթ Մելքոնյան

Ս. Ա. ԴԻԼԲԱՆԴՅԱՆԻ «ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ» ՄԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.....123

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

**ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿՆ
ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ
ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Մասնակիցներ

Ղազինյան Գագիկ - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
 Գաբուզյան Արա - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
 Առաքելյան Սերգեյ - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
 Մարգարյան Աննա - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
 Սիմոնյան Տիգրան - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
 Մեղրյան Սերգեյ - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
 Մելիքյան Ռուբեն – ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, ՀՀ վճռաբեկ դատարան
 Վարդապետյան Աննա - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ, ՀՀ վճռաբեկ դատարան
 Մնացականյան Անդրանիկ - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
 Մանուկյան Անդրանիկ - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
 Հովհաննիսյան Արման - ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
 Հարությունյան Գագիկ – ՀՀ սահմանադրական դատարան
 Նահապետյան Կորյուն – ՀՀ ԱԺ պատգամավոր
 Սիմոնյան Արա– ՀՀ ԱԺ պատգամավոր
 Ավետիսյան Դավիթ – ՀՀ վճռաբեկ դատարան
 Համբարձումյան Գագիկ – ՀՀ քննչական գլխավոր վարչություն
 Պետրոսյան Թաթուլ – ՀՀ քննչական գլխավոր վարչություն
 Առուստամյան Նիկոլայ – ՀՀ արդարադատության նախարարություն
 Սարգսյան Հայկ- ՀՀ արդարադատության նախարարություն
 Սարգսյան Հրաչ – ՀՀ դատավորների միություն
 Մարաբյան Սերգեյ – ՀՀ դատական դեպարտամենտ
 Ավետիսյան Սերժիկ - ՀՀ վերաքննիչ դատարան
 Հարությունյան Արմեն - ՀՀ ՊՆ քննչական ծառայություն
 Մարգարյան Ալբերտ - ՀՀ զինվորական դատախազություն
 Հարությունյան Արտակ – ՀՀ զինվորական դատախազություն
 Ավետիսյան Տիգրան – ՀՀ զինվորական դատախազություն
 Մարտիրոսյան Միսակ – ՀՀ ոստիկանության ակադեմիա
 Մելիքսեթյան Արմինե - ՀՀ ոստիկանության ակադեմիա
 Խաչատուրյան Դավիթ - ԱՄՆ դեսպանատուն
 Սիլվանյան Մարիա - ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ

2 011 թ. հունիսի 22-ին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի, ՀՀ իրավաբանների միության և սահմանադրական իրավունքի կենտրոնի նախաձեռնությամբ, ՀՀ արդարադատության նախարարության հովանու ներքո ԵՊՀ Պալատների

անվան դահլիճում տեղի ունեցավ գիտագործնական քննարկում՝ նվիրված քրեական օրենսգրքի արդի վիճակին և զարգացման հեռանկարներին: Քննարկմանը մասնակցում էին ինչպես իրավաբան գիտնականներ, այնպես էլ ՀՀ արդարադա-

տության նախարարության, ոստիկանության, ռազմական ոստիկանության, դատախազության, դատական դեպարտամենտի ներկայացուցիչներ, դատավորներ, ԱԺ պատգամավորներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ, ասպիրանտներ, ուսանողներ:

Բացման խոսքով հանդես եկավ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Գագիկ Ղազինյանը**, որը ներկայացրեց թեմայի կարևորությունը և քննարկման մասնակիցներին առաջարկեց անդրադառնալ թե՛ տեսական, թե՛ պրակտիկ նշանակության այն հիմնախնդիրներին, որոնք ի հայտ են գալիս ՀՀ քրեական օրենսգրքի կիրառման ընթացքում:

ՀՀ ներկայիս քրեական օրենսգրքի թերությունները և բացերը ներկայացնող զեկույցով հանդես եկավ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ ի.գ.դ. **Արա Գաբուլյանը**: Վերջինս իր ելույթում նշեց, որ գործող քրեական օրենսգրքը, փաստորեն, տարբեր երկրների քրեական օրենսգրքերի անհաջող հավաքածու է և զուրկ է հստակ հայեցակարգից, ինչն էլ խոչընդոտում է դրա արդյունավետ կիրառմանը: ՀՀ գործող քրեական օրենսգրքում առկա են հայեցակարգային թերություններ, անտեսված է կրիմինալոգիական իրականությունը: Բացի այդ՝ օրենսգրքում առկա են լեզվական թերություններ, տրամաբանական հակասություններ, միջազգային վավերացված պայմանագրերի հետ անհամապատասխանություններ, որոնք հնարավորություն չեն ընձեռում ապահովելու արդարացի քրեական արդարադատություն: Խնդիրների հրատապությունն ակնառու է հատկապես պատիժների համակարգի, պատժի նշանակման և դրանից ազատման ինստիտուտների կիրառման առնչությամբ: Իսկ քրեական օրենսգրքում անընդհատ կատարվող, հաճախ իրարամերձ փոփոխությունները ստեղծում են խառնաշփոթ թե տեսաբանների, թե պրակտիկ աշխատողների

համար: Միաժամանակ, չափազանց կարևոր է տուժողի դերի մեծացումը քրեական արդարադատությունը իրականացնելիս, այդ թվում՝ հանցավորին քրեական պատասխանատվությունից ազատելու գործընթացում: Ձեկույցի վերջում նշվեցին այն ուղղությունները և հայեցակարգային դրույթները, որոնք պետք է դրվեն նոր քրեական օրենսգրքի ստեղծման հիմքում:

Ձեկույցը ներկայացնելուց հետո զեկույցողին ուղղվեցին մի շարք հարցեր, որոնք հիմնականում հանգում էին հետևյալին. 1. արդյոք ՀՀ գործող քրեական օրենսգրքը պե՞տք է փոփոխվի ամբողջապես, թե՞ այն հնարավոր է շտկել փոփոխությունների միջոցով, 2. արդյո՞ք տուժողի իրավունքների նկատմամբ ուշադրությունը չարաշահումների տեղիք չի տա, 3. արդյո՞ք ՀՀ գործող քրեական օրենսգրքում ներկայացված պատիժները խիստ չեն, 4. արդյո՞ք առկա է ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգ, նախագծի մակետ, որոնց շուրջ կարող է շարունակվել աշխատանքները, 5. այն հայեցակարգը, որը առաջ է քաշվում զեկույցողի կողմից, արդյո՞ք ճանաչում և տարածում ունի գիտական շրջանում, 6 արդյո՞ք անձի հայեցակարգը կապահովի ՀՀ-ում քրեական օրենսգրքի կիրառման արդյունավետությունը և չի լինի արհեստականորեն նորմուծված:

Պատասխանելով առաջադրված հարցերին՝ Ա. Գաբուլյանը նշեց, որ, իր կարծիքով, ՀՀ գործող քրեական օրենսգրքը հիմնարար փոփոխման կարիք ունի, և նման վիճակը հնարավոր չէ շտկել առանձին փոփոխությունների միջոցով: Գործող քրեական օրենսգրքում բացակայում է միասնական հայեցակարգը, ուստի պետք է ընդունել նոր քրեական օրենսգրք, և առանձին փոփոխությունները հայեցակարգ ձևավորելու հնարավորություն չեն տա: Ինչ վերաբերում է տուժողների դերի մեծացմանը, ապա խոսքը վերաբերում է ոչ թե վերջինիս իրավունքների ուռճացմանը, այլ ՀՀ գործող քրեական օրենսգրքում վերջինիս դերի հստակ կանոնակարգմանը: Միաժա-

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

մանակ, վերանայման կարիք ունեն նաև պատիժները, քանի որ հաճախ անհեթեթ վիճակ է ստեղծվում դրանց կիրառման կապակցությամբ: Ինչ վերաբերում է քրեական օրենսգրքի նախագծի մակետին կամ հայեցակարգին, ապա այն դեռևս առկա չէ, բայց հայեցակարգային դրույթները ներկայացված են իր զեկույցում: Պատասխանելով իր զեկույցում առաջ քաշված հայեցակարգի վերաբերյալ հարցերին՝ Ա. Գաբուլայանը նշեց, որ քրեական իրավունքում ճանաչում են գտել երկու հայեցակարգեր՝ արարքի և անձի հայեցակարգերը: Օրինակ՝ ՌԴ քրեական օրենսգրքը ընդունել է արարքի հայեցակարգը, մինչդեռ Շվեյցարիայի, Գերմանիայի քրեական օրենսգրքերը հիմնված են անձի հայեցակարգի վրա: Վերջինս առավել հիմնավոր է թվում, քանի որ հնարավորություն է տալիս ապահովելու պատժի անհատականացումը, արդարությունը: Ընդ որում, ՀԽՍՀ քրեական օրենսգրքը հիմնված էր անձի հայեցակարգի վրա, և միայն 2003 թ. քրեական օրենսգրքով անցում կատարվեց արարքի հայեցակարգին: Հետևաբար, անձի հայեցակարգը Հայաստանում առավել արդյունավետ կիրառություն է ունեցել, քան արարքի հայեցակարգը:

Ձեկուցողին հարց տրվեց նաև, թե արդյոք ճիշտ չէր լինի ստեղծել միասնական աշխատանքային խումբ, որը կաշխատեր ոչ միայն ՀՀ քրեական նոր օրենսգրքի, այլև վարչական իարավախախտումների նոր օրենսգրքի ստեղծման ուղղությամբ: Բանն այն է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ և քրեական օրենսգրքերը հաճախ կոլիզիաների մեջ են հայտնվում, և դրանից խուսափելու համար գուցե ճիշտ կլիներ միասնական աշխատանքային խմբի ձևավորումը:

Պատասխանելով հարցին՝ Ա. Գաբուլայանը նշեց, որ ոչ միայն վարչական իրավախախտումների վերաբերյալ և քրեական օ-

րենսգրքերը, այլև քրեական դատավարության օրենսգիրքը պետք է նման միասնական պրիզմայով անցնեն: Ճիշտ կլիներ փոքր-ինչ հետաձգել քրեական դատավարության օրենսգրքի վերջնական տարբերակի ընդունումը, որպեսզի միասնական մոտեցում դրսևորվեր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ընդունման ժամանակ:

Այնուհետև ելույթով հանդես եկավ **ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գ. Հարությունյանը**, որը նույնպես կարևորեց ՀՀ նոր քրեական օրենսգրքի ընդունման անհրաժեշտությունը՝ նշելով, որ հենց Սահմանադրական դատարանի գործունեության ընթացքում հաճախ առնչվում են ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխման պահանջների հետ, որոնք պայմանավորված են ՀՀ գործող քրեական օրենսգրքի հստակ հայեցակարգի բացակայությամբ: Վերջին ժամանակահատվածում նմանատիպ խնդիրների առնչվել են գույքի բռնագրավման հողվածի կիրառության հետ կապված խնդրի լուծման կապակցությամբ: Բացի այդ՝ հասարակության զարգացմանը զուգընթաց փոփոխվում են նաև հասարակական հարաբերությունները, և գործող քրեական օրենսգրքը՝ որպես քրեական արդարադատության նյութական հիմք, արդեն ի գորու չէ ապահովելու վերջինիս արդյունավետությունը: ՀՀ գործող քրեական օրենսգրքում պահի թելադրանքով կատարվող անվերջ փոփոխությունները միայն խառնաշփոթի տեղիք են տալիս:

Բացի այդ՝ նույն քրեական օրենսգրքը ընդունելու կամ դրանում փոփոխություններ կատարելու ժամանակ կարծես թե անտեսվում է կոռուպցիոն ռիսկերի գնահատումը: Նույնիսկ ՌԴ-ում ձևավորվել է մեթոդիկա, որը հնարավորություն է ընձեռում իրականացնել կոռուպցիոն ռիսկերի տեսակետից օրենքի դրույթների գնահատում: Գ. Հարությունյանը նշեց, որ, իր կարծիքով, նման մեթոդիկայի ներդրումը ՀՀ-ում նույնպես արդյունավետ կլինի:

Բացի այդ՝ պետք է քրեական օրենսգրքի ձևակերպումները լինեն այնպիսին, որ տեսությունը և պրակտիկան հնարավորինս միասնականացվեն: Գ. Հարությունյանը առաջարկեց նոր քրեական օրենսգրքի ստեղծման համար ձևավորել աշխատանքային խումբ, որում ընդգրկված կլինեն թե տեսաբաններ, թե պրակտիկներ, ովքեր քննարկումների միջոցով կզտեն մեր իրականությանը համապատասխանող լուծումներ՝ արդյունավետ քրեական օրենսգրք ստեղծելու համար:

Գ. Դազինյանը նշեց, որ նման արդյունավետ փորձ արդեն իսկ կա ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգը և նախագիծը պատրաստող աշխատանքային խմբի ձևավորման օրինակով, ուստի այն կարող է կիրառվել նաև ՀՀ քրեական նոր օրենսգրքի մշակման ժամանակ: Ընդ որում, ճիշտ կլիներ սկզբից ընդունել քրեական օրենսգրքը, հետո քրեական դատավարության օրենսգրքը, հակառակ պարագայում արդեն իսկ ուժի մեջ մտած նոր քրեական դատավարության օրենսգրքում կրկին փոփոխությունների կարիք կլինի:

Այնուհետև **ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Դավիթ Ավետիսյանը** իր զեկույցում ներկայացրեց այն հիմնախնդիրները, որոնք ի հայտ են գալիս ՀՀ քրեական օրենսգրքի կիրառման ժամանակ: Ձեկուցողը նշեց, որ թեև իր և Ա. Գաբուլայանի զեկույցները առանձին են պատրաստվել, սակայն դրանք մեծ մասամբ համընկնում են՝ կապված թե քրեական օրենսգրքի թերությունների, թե բացերի հետ: ՀՀ գործող քրեական օրենսգրքի ընդունումից հետո դրանում կատարվել են շուրջ 180 փոփոխություններ (ՌԴ-ում՝ 1000-ից ավելի), ինչը պայմանավորված է նրանով, որ գործող քրեական օրենսգրքը չի համապատասխանում հասարակության զարգացման ներկայիս իրողությանը: Քրեական օրենսգրքում անընդհատ փոփոխություններ են կատարվում, հաճախ 2-ից ավելի անգամ փոփոխության է ենթարկ-

վում նույն հոդվածը, սակայն կրկին անարդյունավետ: Քրեական օրենսգրքի զարգացումը պետք է իրականացվի մի շարք ուղղություններով՝ 1. ՀՀ քրեական օրենսգրքի ներկայիս տնտեսական հարաբերություններին համահունչ դարձնելու, 2. վարչական և քրեական իրավախախտումների հստակեցման, 3. ՀՀ գործող քրեական օրենսգրքի նորմերի և միջազգային կոնվենցիաների դրույթների համապատասխանության ապահովման, 4. սուբյեկտիվ մեկնաբանության տեղիք տվող հասկացությունների հստակեցման, 5. պատժի այլընտրանքային միջոցների արդյունավետ համակարգի ապահովման, 6. քրեական օրենսգրքի ձևավորման ժամանակ կրիմինոլոգիական գիտելիքների, գիտական հետազոտությունների կիրառման և այլն:

Այդ առումով զեկուցողը կարևորեց նույնիսկ գիտական և կրթական հաստատություններում գիտական աշխատանքների թեմատիկայի ընտրության ժամանակ այն պիսի հարցերի ուսումնասիրումը (թե գիտական աշխատողների, թե ասպիրանտների և մագիստրոսների կողմից), որոնք ներկայումս հրատապ կարևորություն են ներկայացնում մեր հասարակության համար:

Ձեկուցումից հետո բանախոսին հարց տրվեց, թե արդյոք վճռաբեկ դատարանի գործունեության ընթացքում եղել են այնպիսի մեկնաբանություններ, որոնք, արտահայտելով վճռաբեկ դատարանի դիրքորոշումը կոնկրետ դեպքի առնչությամբ, միաժամանակ, փաստորեն լրացրել են քրեական օրենսգրքը:

Պատասխանելով հարցին՝ **Դ. Ավետիսյանը** նշեց, որ վճռաբեկ դատարանը միայն ապահովում է օրենքի արդյունավետ կիրառումը և հիմնվում է օրենքի մեկնաբանության վրա: Այնուհանդերձ, քիչ էն այնպիսի որոշումներ, որոնք պրակտիկ առումով վճռորոշ նշանակություն ունեն: Օրինակ, խարդախության վերաբերյալ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, որով խարդա-

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

խություն չեն կարող որակվել այն դեպքերը, երբ քաղաքացին իր ցածր իրավագիտակցության պատճառում հայտնվում է խոցելի վիճակում, ասենք՝ պայմանագիր չկնքելով և այլն:

Ելույթով հանդես եկավ ԳՅ Վերաքննիչ դատարանի դատավոր Սերժիկ Ավետիսյանը: Նա նշեց, որ վերջին տասնամյակի ընթացքում իր գիտական աշխատանքն անմիջականորեն ուղղված է եղել քրեական օրենսգրքի մշակմանը, դրա հստակեցման ապահովմանը: Իր ընկալմամբ, քրեական օրենսգրքը պետք է բաղկացած լինի հետևյալ բաժիններից՝ 1. բուն քրեական օրենսգրք (ընդհանուր հասկացություններ), քրեաիրավական բնորոշումներ, հանցագործության որակման կանոններ, 2. քրեական իրավունքի ընդհանուր մասով նախատեսված քրեական պատասխանատվության հիմքեր, օրինակ՝ արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներ, 3. հանցակազմերը, 4. պատժի համակարգը: Ընդ որում, պետք է լինի առանձին բառարան, որտեղ կտրվեն հանցագործությունների բնորոշումները: Պետք է հստակեցվեն պատժի մշանակման կանոնները, օրինակ՝ մատնանշելով հստակ պահանջներ, որոնց առկայության դեպքում պետք է մշանակվի պատժի պայմանականորեն չկիրառման ինստիտուտ և այլն:

Այնուհետև քննարկման մասնակիցները իրենց դիրքորոշումն ու կարծիքը արտահայտեցին նոր քրեական օրենսգրքի ունենալու անհրաժեշտության և դրա որոշ դրույթների վերաբերյալ:

Մասնակիցների գերակշիռ մասը այն կարծիքին էր, որ նոր քրեական օրենսգրքի ունենալն անհրաժեշտ է, և հնարավոր չէ միայն փոփոխություններով շտկել առկա վիճակը: Միայն մեկ կարծիք հնչեց, որ թերևս շտապողականություն պետք չէ դրսևորել, և պետք չէ բացառել երկու տարբերակով աշխատանքը՝ 1. լիովին նոր քրեական օրենսգրք ստեղծել, 2. գործող քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարել:

Արվեցին նաև կոնկրետ առաջարկություններ, մասնավորապես՝ որ նոր քրեական օրենսգրքում հնարավորինս հստակ լինեն յուրաքանչյուր հանցավոր արարքի համար նախատեսված պատիժները, ինչը թույլ կտա խուսափել չարաշահումներից, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նկատառումից ելնելով՝ առաջարկվեց հողվածների ձևակերպումները և դրանց համար սանկցիաները հստակեցնել՝ տրոհման եղանակով, և այլն: Առաջարկություն հնչեց նաև քրեական օրենսգրքի փոփոխմանը զուգահեռ պատրաստել դրա մեկնաբանությունները:

Ամփոփելով քննարկումը՝ **Գ. Ղազինյանը** նշեց, որ միստի գրեթե բոլոր մասնակիցները քրեական նոր օրենսգրքի ստեղծման կողմնակից են: Ուստի անհրաժեշտ է հետագա ավելի հանգամանալից ու մանրամասն քննարկումների կազմակերպում: Դրա համար որոշվեց պատրաստել ԳՅ նոր քրեական օրենսգրքի ստեղծման անհրաժեշտությունը հիմնավորող, նոր քրեական օրենսգրքի հիմնական հայեցակարգային դրույթներն արտացոլող փաստաթղթի նախագիծ և այն դնել շրջանառության մեջ, ուղարկել շահագրգիռ բոլոր կառույցներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍՐԳՐՔԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Արա ԳԱՐՈՒՋՅԱՆ

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ

2003թ. օգոստոսի 1-ից գործողության մեջ դրվեց ՀՀ քրեական նոր օրենսգիրքը: Դրա ընդունումը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Նախ՝ 1995 թ. ընդունվել էր անկախ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, և բնականաբար բոլոր մյուս օրենքներն ու օրենսգրքերը պետք է համապատասխանեցվեին Սահմանադրության դրույթներին: Այս տեսակետից ՀՀ քրեական նոր օրենսգրքի ընդունումը նույնիսկ փոքր-ինչ ուշացել էր: Բացի այդ՝ նախկին քրեական օրենսգիրքը արդեն չէր համապատասխանում հանրապետությունում ձևավորվող ու զարգացող տնտեսական, սոցիալական, քաղաքական, գաղափարախոսական իրողություններին, ինչպես նաև քրեական իրավունքի գիտության առկա մակարդակին:

ՀՀ քրեական օրենսգիրքը սկզբնական շրջանում կատարեց իր առաքելությունը՝ հանրապետությունում ընթացող գործընթացների արդյունքում ծագած ու ձևավորվող հանցավոր վարքագծի նոր ձևերի դեմ պայքարի գործում հարաբերականորեն արդյունավետ միջոց հանդիսանալով:

Բարձր գնահատելով գործող քրեական օրենսգրքի դերը հանրապետությունում հանցավորության դեմ պայքարի գործում, այնուհանդերձ պետք է նշել, որ դրա նորմերի գիտական վերլուծությունը և կիրառման պրակտիկան բացահայտեցին նաև օրենսգրքում առկա բազմաթիվ թերությունները: Պատահական չէ, որ մինչ այժմ քրեական օրենսգրքում արդեն մոտ հարյուր փոփոխություն ու լրացում է կատարվել: Ընդ որում, այս գործընթացը դեռ շա-

րունակվում է: Պետք է նշել, սակայն, որ շատ հաճախ արված փոփոխությունները ոչ թե շտկել են վիճակը, այլ ընդհակառակը՝ ավելացրել են օրենսգրքում առկա հակասություններն ու թերությունները: Փոփոխությունների մի մասը կատարվել են պահի թելադրանքով, կոնկրետ դեպքի կապակցությամբ, առանց հաշվի առնելու օրենսգրքի ընդհանուր տրամաբանությունը, մյուսները զուրկ են կրիմինալոգիական հիմնավորվածությունից կամ հակասում են քրեական իրավունքի տեսության ժամանակակից միտումներին: ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունների ու լրացումների մի զգալի մասը աչքի է ընկնում լեզվական անճշտություններով, ինչի արդյունքում անհնար է դառնում նորմի ճիշտ կիրառումը:

Բացի նշվածից, ՀՀ քրեական օրենսգիրքը հայեցակարգային փոփոխությունների կարիք ունի, որովհետև դրանում, փաստորեն, հայեցակարգ էլ չկա. մեր քրեական օրենսգիրքը ԱՊՀ մոդելային քրեական օրենսգրքի և ՌԴ քրեական օրենսգրքի սինթեզ է ներկայացնում, որը զուրկ է կուռ կառուցվածքից և լի է հակասություններով: Բնականաբար խիստ ցածր է քրեական օրենսգրքի արդյունավետությունը: Բավական է նշել, որ ՀՀ-ում հանցավորությունը աճի միտում է դրսևորում, հանցավորության մեջ տարեցտարի ավելանում է ռեցիդիվային հանցավորության տեսակարար կշիռը, պետությանը պատճառված նյութական վնասների զգալի մասը այդպես էլ չի վերականգնվում և այլն:

Եթե ընդհանրացնելու լինենք ՀՀ քրեական օրենսգրքում առկա թերությունները, ապա դրանք կարելի է դասակարգել հետևյալ տեսակների՝

ա) հայեցակարգային անճշտություններ և կրիմինալոգիական իրականության անտեսում,

բ) սխալներ և հակասություններ,

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

գ) բացեր:

Քայեցակարգային անճշտություններ և կրիմինալոգիական իրականության անտեսում

Չանցագործության այս կամ այն տեսակի համար պատիժ նախատեսելիս օրենսդիրը պետք է հիմք ընդունի ոչ միայն և ոչ այնքան պատճառված վնասի չափը, այլև հիմնվի ***կրիմինալոգիական իրողության*** վրա, որի կարևոր տարրերից մեկը հանցանք կատարողի անձն է: Ցավոք, օրենսդիրը գրեթե երբեք հաշվի չի առնում այս իրողությունը: ՀՀ քրեական օրենսգիրքը, հիմնված լինելով «արարքի հայեցակարգի վրա», հանցագործությունների համար պատիժ նախատեսելիս հիմք է ընդունում պատճառաված վնասի չափը, ինչի արդյունքում հաճախ անտեսվում է կրիմինալոգիական իրողությունը, խախտվում է արդարությունը: Մասնավորապես՝ ՀՀ քրեական օրենսգիրքը հափշտակությունների համար քրեական պատասխանատվության խստությունը կապում է հափշտակության չափի հետ՝ խոշոր և առանձնապես խոշոր չափերը նախատեսելով որպես հանցակազմների ծանրացնող հանգամանքներ: Արդյունքում՝ գողության եղանակով 501 հազար դրամ հափշտակած, առաջին անգամ հանցանք կատարած անձը կարող է դատապարտվել երկուսից վեց տարի ժամկետով ազատազրկման, իսկ նույն եղանակով 499 հազար դրամ հափշտակած, նախկինում դատապարտված անձը կարող է դատապարտվել մինչև երկու տարի ժամկետով ազատազրկման: Խախտվում է արդարությունը, անտեսվում է կրիմինալոգիական իրողությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 105-ը պատասխանատվություն է նախատեսում հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանության համար, իսկ հոդվածի երկրորդ մասով ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսված հո-

գեկան խիստ հուզմունքի վիճակում երկու կամ ավելի անձանց սպանության համար: Ստացվում է, որ, օրինակ, խմբի կողմից ծաղրուծանակի կամ բռնության ենթարկված և հոգեկան խիստ հուզմունքի վիճակում հայտնված անձը պարտավոր է զսպել իրեն և ընտրել ու սպանել իր նկատմամբ հանցավոր արարք կատարած անձանցից մեկին: Բայց դա արբուրդ է թե հոգեբանության, թե կրիմինալոգիայի տեսանկյունից:

Այս կապակցությամբ ևս մեկ օրինակ բերենք: ՀՀ քր. օր.-ի հոդված 177-ի առաջին մասը պատասխանատվություն է նախատեսում զգալի չափերով գողության համար, իսկ չորրորդ մասը՝ ձեռքի պայուսակից, հագուստից կամ այլ պահոցից կատարված մանր չափերի գողության համար: Հիմք ընդունելով զուտ այն փաստը, որ վերջին դեպքում գողությունը մանր չափերով է կատարվում՝ օրենսդիրը դրա համար ավելի մեղմ պատիժ է նախատեսել: Մինչդեռ նման դեպքերում խոսքը, որպես կանոն, զրպանահատների մասին է, ովքեր բարձր հանրային վտանգավորությամբ են օժտված և կրիմինալ աշխարհում ընդունված դասակարգման աղյուսակում առաջատար տեղերից մեկն են զբաղեցնում, այնինչ հոդված 177-ի առաջին մասով նախատեսված հանցանքը կարող է կատարել սոցիալական ծանր կացության մեջ գտնվող այն անձը, ով ոչ մի կապ չունի հանցավոր աշխարհի հետ:

Քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներից է ***ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը***: Քրեական իրավունքի տեսության մեջ մեղքի վերաբերյալ առկա են երեք հիմնական հայեցակարգեր՝ վտանգավոր վիճակի, նորմատիվիստական և հոգեբանական: Մեր քրեական օրենսդրությունը հիմնված է հոգեբանական հայեցակարգի վրա, որի հիմնական դրույթը հանգում է նրան, որ մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է իր արարքի և դրա վտանգավոր հետևանքների նկատմամբ և դրսևորվում է դիտավորության կամ

անզգուշության ձևերով: Սակայն հոգեբանական հայեցակարգը հաճախ թույլ չի տալիս ապահովել արդարությունը և հաշվի առնել կրիմինալոգիական իրողությունները: Մասնավորապես, հոգեբանական հայեցակարգի շրջանակներում դիտավորությունն առկա է այն դեպքում, երբ անձը գիտակցում է իր արարքի փաստական հանգամանքները և դրանց սոցիալական նշանակությունը: Ակնհայտ է, որ դիտավորության օրենսդրական բնորոշումը թույլ չի տալիս լիովին հիմնավորել քրեական պատասխանատվությունը աֆեկտի, ծանր հարբածության վիճակում կատարված հանցագործությունների համար:

Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի հետ է առնչվում իրավաբանական կամ փաստական սխալի ինստիտուտը: Այս հարցը ներկայումս որևէ օրենսդրական լուծում չի ստացել: Մինչդեռ շատ երկրների քրեական օրենսդրություններում սխալի ինստիտուտը մանրամասն կարգավորվում է, ինչը նպաստում է օրենքի միասնական կիրառմանը և ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի ապահովմանը:

Աշխարհի շատ երկրների քրեական օրենսգրքերը հիմնվում են անձի հայեցակարգի վրա, համաձայն որի՝ պատժվում է հանցանք կատարած անձը, ուստի պատիժը պետք է համապատասխանի անձի հանրային վտանգավորությանը: Այս հայեցակարգը ավելի պրագմատիկ բնույթ ունի: Պատժի հիմնական նպատակը այստեղ հանցանք կատարած անձին ուղղելն է և նրա ռեսոցիալիզացիան: Մեր քրեական օրենսգրքը, ինչպես արդեն ասացինք, հիմնված է արարքի հայեցակարգի վրա, որը շատ դեպքերում թույլ չի տալիս ոչ միայն ապահովել արդարության սկզբունքը, ինչի մասին արդեն նշել ենք, այլև պրագմատիկ ու ժամանակակից պայմաններին ու քրեական իրավունքի տեսությանը համապատասխան քրեաիրավական քաղաքականություն իրականացնել: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքում հանցագործությունները դասկարգվում են ըստ օ-

րենքում նախատեսված պատժի խստության: Դրանով պայմանավորված ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձը չի կարող ասենք ազատվել քրեական պատասխանատվությունից: Բայց հարցն այն է, որ շատ դեպքերում այսպես կոչված ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձը կարող է իրենից ավելի քիչ հանրային վտանգավորություն ներկայացնել, քան միջին ծանրության հանցանք կատարածը: Օրինակ՝ անձը ծանր հանցագործության մեջ հանդես է եկել օժանդակողի դերում, կամ առկա են բազմաթիվ մեղմացնող հանգամանքներ և այլն: Ըստ այդմ էլ դատարանը այնպիսի մեղմ պատիժ է նշանակել, որը հավասարազոր է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նախատեսված պատժին: Սակայն, քանի որ հանցագործությունների դասակարգման հիմքում դրվում է օրենքով նախատեսված պատժաչափը, ապա անձի արարքը համարվում է ծանր հանցագործություն՝ դրանից բխող իրավական հետևանքներով:

Կարծում ենք, որ այս տեսակետից քրեական օրենսգրքը լուրջ վերանայման կարիք ունի:

Լուրջ վերանայման կարիք ունի պատժի համակարգը: Գործող օրենսդրության պայմաններում հաճախ դատարանը ազատազրկմանն այլընտրանք չի ունենում: Այստեղից էլ ազատազրկում պատժատեսակի չարդարացված հաճախակի կիրառումը, ինչն արդեն պրոբլեմներ է ստեղծել քրեակատարողական հիմնարկների համար: Բացի այդ՝ ազատազրկում պատժատեսակի հաճախակի կիրառումը կարող է նպաստել հասարակական հարաբերությունների քրեականացմանը, գողական օրենքների տարածմանը քաղաքացիական հասարակության մեջ: Մեր դատարանները հաճախ ելքը գտնում են պատիժը պայմանականորեն չկիրառելով, բայց այս ինստիտուտի ոչ հստակ և բացերով ու թերություններով աչքի ընկնող օրենսդրական կարգավորումը չի նպաս-

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

տուն պատժողական քաղաքականության արդյունավետությանը: Կարծում ենք, որ խնդրի լուծման ուղիներից մեկը ազատագրկամանը իրական այլընտրանք հանդիսացող պատժատեսակների ցանկի ընդլայնումն է և դրանց կիրառման համար արդյունավետ ու գործուն մեխանիզմների ներդրումը: Ներկայումս ազատագրկամանն այլընտրանք հանդիսացող հանրային աշխատանքները արդյունավետ չեն և հիմնականում նշանակվում են տուգանքի վճարման անհնարինության դեպքում: Ունենք կալանք պատժատեսակը, որը նույնպես ըստ էության չի կիրառվում. պատճառներից մեկը, մեր կարծիքով, երկար ժամկետն է (երեք ամիս տևողությամբ շոկային էֆեկտը, մեր կարծիքով, հիմնավորված չէ):

Մեկ այլ ուղի է քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատելու ինստիտուտների կատարելագործումը: Կարծում ենք, օրինակ, որ լուրջ կատարելագործման կարիք ունեն տուժողի հետ հաշտվելու կամ գործուն զղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտները: Վերջինս, փաստորեն, անպատժելիությանը նպաստող ինստիտուտ է դարձել, որովհետև ոչ մի լուրջ զրկանք չի պատճառում դատապարտյալին, դատապարտյալի հետ էլ ոչ մի վերականգնողական աշխատանք չի տարվում: Կարծում ենք նաև, որ ժամանակն է քննարկել մեր օրենսդրության մեջ այնպիսի ինստիտուտների ներմուծման հարցը ինչպիսիք են մեղացիան, տրանսակցիան:

Շատ կարևոր է տուժողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը: Կարծում ենք, որ պատժի համակարգը և պատժատեսակները պետք է նպատակաուղղված լինեն նաև հանցագործությամբ պատճառ-

ված վնասի հատուցմանը: Այս տեսանկյունից, օրինակ, մեր կարծիքով, վերանայման կարիք ունի գույքի բռնագրավում և տուգանք պատժատեսակների նկատմամբ մոտեցումը. դրանք առաջին հերթին պետք է նպատակաուղղված լինեն պատճառված վնասի հատուցմանը: Մինչդեռ գործող օրենսդրության պայմաններում այս պատժատեսակները գրեթե նման գործառույթ չեն կատարում: Մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի 55 հոդվածի համաձայն՝ գույքի բռնագրավումը դատապարտյալի սեփականություն համարվող գույքը կամ դրա մի մասը հարկադրաբար և անհատույց վերցնելն է՝ ի սեփականություն պետության: Ընդ որում, ոչ մի խոսք չի ասվում տուժողին պատճառված վնասը հատուցելու ապահովման մասին: Հարց է առաջանում, թե ինչու ի սեփականության պետության, եթե հանցանքի կատարումը վկայում է նաև այն մասին, որ պետությունը լավ չի կատարել մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության, հասարակական կարգի պահպանության իր գործառույթը: Այլ հարց է, եթե վնասը պատճառվել է պետությանը: Բայց եթե վնասը պատճառվել է անհատին, կազմակերպությանը, ապա, մեր կարծիքով, գույքի բռնագրավման առաջնային նպատակը պետք է լինի նրանց պատճառած վնասի հատուցումը, և եթե հանցավորը հնարավորություն չունի հատուցելու պատճառած վնասը, ապա բռնագրավված գույքի հաշվին առաջին հերթին պետք է ապահովվի տուժողին պատճառված վնասի հատուցումը:

Մեկ այլ հարց է տուգանք պատժատեսակի կարգավորումը: Այն նախատեսված է որպես հիմնական պատիժ: Կարծում ենք, սակայն, որ այն չափերը, որոնք նախատեսված են գործող օրենսգրքում, հիմնական պատժի համար շատ փոքր են: Ասվածը լավ երևում է, օրինակ, տնտեսական հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող հոդվածների սանկցիաներում: Ընդ որում, փոքր չափերով տուգանքի հետ որպես այլընտ-

րանք նախատեսվում է ազատագրվումը՝ ասենք՝ երկուսից հինգ տարի ժամկետով. խախտվում է համամասնությունը:

Քննարկման ենթակա խնդիր է նաև տուգանքի չափի որոշման հարցը: Կարծում ենք՝ ճիշտ կլիներ տուգանքի ամրագրված չափից անցնել տուգանքի չափը հանցանք կատարած անձի եկամուտների չափով որոշելու կարգին:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել անչափահասների քրեական պատասխանատվության ու պատժի հարցերին: Կարծում ենք, որ մեր քրեական օրենսգրքում այս հարցերը շատ դեպքերում թերի են կարգավորված: Մասնավորապես, վերանայման կարիք ունի անչափահասների համար նախատեսված պատժի համակարգը: Փաստորեն գործում է միայն ազատագրվում պատժատեսակը, որովհետև մյուս պատժատեսակները օրենսդրական ոչ հստակ կարգավորման պատճառով արդյունավետ չեն: Բացի այդ՝ պետք է հստակ իմանալ, որ անչափահասների պատասխանատվության ու պատժի նպատակը առաջին հերթին պետք է նպատակաուղղված լինի նրանց դաստիարակությանը և ոչ թե պատժելուն: Դատարանները ելքը գտնում են պատիժը պայմանականորեն չկիրառելով, բայց ինչպես արդեն նշել ենք, այս ինստիտուտը իրեն չի արդարացնում: Մեր կողմից կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում ռեցիդիվը կազմում է մոտ 50%: Ըստ էության չի գործում նաև դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների ինստիտուտը: Կարծում ենք՝ ժամանակն է լուրջ մտածելու յուվենալ արդարադատության համակարգի ստեղծման մասին: Բացի այդ՝ կարծում ենք վերանայման կարիք ունի անչափահասություն համարվող տարիքը: Դրանք քրեական և մանկավարժության մեջ վաղուց ապացուցված է, որ 18 տարին լրացած անձը դեռևս լիովին ձևավորված չէ. հիմնականում անձի լիովին ձևավորման մասին կարող է խոսք լինել 21 տարեկա-

նից: Ուստի ճիշտ կլիներ այս օրինաչափությունը հաշվի առնել քրեական օրենսդրության մեջ:

Սխալներ և հակասություններ

Սրանք դրսևորվում են բազմաթիվ ինստիտուտներում և բազմազան ձևերով. հանցակազմի սխալ նկարագրություն, լեզվական անճշտություններ, սխալ կետադրման պատճառով օրենքի իմաստի աղավաղում, հարցի ոչ ամբողջական, սխալ լուծում և այլն:

ՀՀ քր. օր.-ի հոդված 131-ը պատասխանատվություն է նախատեսում մարդուն առևանգելու համար, որտեղ հանցագործության այս տեսակը բնորոշվում է հետևյալ կերպ. «Խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով մարդուն գաղտնի կամ բացահայտ առևանգելը...»: Ինչպես տեսնում ենք, հոդվածում տրվում է մարդուն առևանգելու եղանակների սպառնիչ ցանկը: Ստացվում է, որ եթե մարդուն առևանգեն, ասենք, նրա անօգնական վիճակն օգտագործելով, ապա հանցակազմը կբացակայի:

ՀՀ քր. օր.-ի հոդված 177-ը պատասխանատվություն է նախատեսում գողության համար: Հոդվածի առաջին մասը ունի հետևյալ բովանդակությունը. «Գողությունը՝ ուրիշի գույքի գաղտնի հափշտակությունը, զգալի չափերով՝ պատժվում է...»: Քրեական իրավունքի տեսության մեջ հանրահայտ ճշմարտություն է, որ հոդվածի առաջին մասում նախատեսվում է հանցագործության հասարակ տեսակը, այսպես կոչված հիմնական հանցակազմը, իսկ մյուս մասերում ծանրացնող հանգամանքներով հանցակազմերը: Նույն 177 հոդվածի երկրորդ մասում նախատեսված են, օրինակ, գողության հանցակազմի հետևյալ ծանրացնող հանգամանքերը՝ կրկին անգամ, խոշոր չափերով, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, բնակարան, պահեստարան, շինություն ապօրինի մուտք գործելով: Ընդ որում, ծանրացնող հանգամանքները կարող են առկա

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

լինել միայն այն դեպքում, երբ անձի արարքում արդեն իսկ առկա է հիմնական հանցակազմը: Պրակտիկայում վեճերի տեղիք է տվել այն հարցը, թե արդյոք շինությունն ապօրինի մուտք գործելով մանր չափերով կատարված գողությունը կարող է որակվել 177 հոդվածի երկրորդ մասով: Եթե հիմնվենք օրենքի քերականական մեկնաբանության վրա, ապա, այո, որովհետև 177 հոդվածի առաջին մասում «...հափշտակություն» բառից հետո դրված ստորակետը ցույց է տալիս, որ գողության հանցակազմը ուղղակի մեկ ուրիշի գույքի գաղտնի հափշտակությունն է, իսկ առաջին մասը պարզապես պատասխանատվություն է նախատեսում զգալի չափերով գողության համար: Սակայն, ամբողջ խնդիրն այն է, որ հափշտակության չափը հանցակազմի կառուցվածքային տարրի նշանակություն ունի. հափշտակության չափը դրված է քրեորեն պատժելի հափշտակությունը վարչական զանցանք համարվող հափշտակությունից սահմանազատելու հիմքում, խոշոր և առանձնապես խոշոր չափերը նախատեսված են որպես հանցագործության ծանրացնող հանգամանքներ: Նման պայմաններում հարց է առաջանում, թե որն է գողության հասարակ տեսակը հիմնական հանցակազմը: Փաստորեն այն գոյություն չունի: Բայց քրեաիրավական տեսանկյունից դա արևորդ է:

Մեկ այլ հիմնախնդիր է հանցակազմի ծանրացնող հանգամանքների հարցը: Մեր կարծիքով, շատ դեպքերում դրանք անհիմն են նախատեսվում և հակասությունների պատճառ են դառնում: Օրինակ՝ շատ լավ գիտենք, թե ինչ վեճերի տեղիք է տալիս այն իրադրությունը, երբ հանցակազմում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է այլ հանցագործության հետ զուգորդված լինելու հանգամանքը: Դա շատ լավ երևում է սպանության ծանրացնող հանգամանքների հետ կապված: Միշտ

վեճերի տեղիք է տալիս այն հարցը, թե արդյոք արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ: Օրինակ՝ սպանությունը՝ զուգորդված մարդուն առևանգելու հետ, արդյոք պետք է որակվի որպես ծանրացնող հանգամանքներով սպանություն և մարդուն առևանգել, թե՞ բավական է միայն արաքի որակումը որպես ծանրացնող հանգամանքներով սպանություն: Եթե համակցությամբ ենք որակում, ապա ստացվում է, որ անձը նույն հանցագործության համար կրկնակի է պատժվում: Իսկ եթե բավարարվում ենք միայն որպես ծանրացնող հանգամանքներով սպանություն որակելով, ապա կարծես թե անձը մեկ հանցագործության համար է պատասխանատվության ենթարկվում: Կարծում ենք՝ հարցի լուծումը նման կարգի ծանրացնող հանգամանքներ նախատեսելուց ձեռնպահ մնալն է, մասնավորապես նկատի ունենանք, որ այլ ծանրացնող հանգամանքները (օրինակ՝ այլ հանցանքի կատարումը թաքցնելու կամ հեշտացնելու նպատակով, շահադիտական դրդումներով, անձի կամ նրա մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ և այլն) փակում են հարցը:

Մեր քրեական օրենսգիրքը հրաժարվեց կրկնակիության ինստիտուտից: Կարծում ենք, որ դա ճիշտ է: Բայց, միևնույն ժամանակ, մեր կարծիքով, հարցի լուծումը ամբողջական ու հիմնավոր չի իրականացվել: Նախ՝ նախատեսվել է ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու մի կարգ, որը, մեր կարծիքով, ոչնչով չի նպաստում պրոֆեսիոնալ և ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարի արդյունավետությանը. միայն պատժի նվազագույն շեմը սահմանելը պատժի այն խստացումը չէ, որը տվյալ դեպքում անհրաժեշտ է: Աշխարհի երկրների մեծ մասի քրեական օրենսդրություններում նախատեսվում է ռեցիդիվի դեպքում պատժի էական խստացման հնարավորություն: Բացի այդ՝ կրկնակիությունը որ-

պես հանցակազմի հատկանիշ վերացնելը չի նշանակում, որ հատուկ ռեցիդիվի կամ դատվածության հետ չկապված կրկնակիության դեպքերի պատժելիության հարցերը պետք է աչքաթող արվեն: Շատ օրենսդրություններ պատժի նշանակման հատուկ կարգ են սահմանում նաև այս դեպքերի համար:

Միավների ու հակասությունների մի խումբ էլ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի ու ՀՀ Սահմանադրության միջև առկա հակասություններին: Մասնավորապես, կարծում ենք՝ հակասություն է առկա ՀՀ քր. օր.-ի 42 հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի ու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասի միջև, համաձայն որի՝ անձին կյանքից զրկելը անհրաժեշտ պաշտպանության վիճակում պետք է պայմանավորված լինի բացարձակ անհրաժեշտությամբ: Մինչդեռ 42 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը միասին ընթերցելու դեպքում ստացվում է, որ մեր քր. օր.-ը թույլ է տալիս կյանքից զրկելով պաշտպանությունն իրականացնել նաև այն դեպքում, երբ դա պայմանավորված չի եղել բացարձակ անհրաժեշտությամբ: Միջազգային պայմանագրերի դրույթները ամբողջությամբ չեն արտացոլում կամ սխալ են արտացոլում խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները նախատեսող որոշ հանցակազմեր և այլն:

Բացեր

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը և քրեական օրենսդրության նորմերի վերլուծությունը ցույց են տալիս, որ շատ հարցեր իրենց օրենսդրական լուծումը չեն ստացել: Օրինակները շատ են:

Այսպես, քրեական իրավունքի տեսությանը հայտնի է քրեաիրավական նորմերի մրցակցության ինստիտուտը, երբ կատարված արարքի կամ իրադրության հատկա-

նիշները առկա են քրեական օրենսգրքի՝ մեկից ավելի տարբեր հոդվածներում, և հարց է առաջանում, թե որ նորմը պետք է կիրառվի տվյալ իրադրության կապակցությամբ: Քրեական իրավունքի տեսության մեջ այս հարցը կարգավորված է, այն կարգավորված է նաև մի շարք երկրների քրեական օրենսդրություններում: Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգիրքը հարցի ոչ մի լուծում չի պարունակում, ինչը գործնական դժվարություններ է առաջացնում. պրակտիկայում կարող է կիրառվել հարցի լուծման ցանկացած եղանակ, և հնարավոր չի լինի հավաստել դրա սխալ կամ ճիշտ լինելը:

Մեկ այլ օրինակ: Քրեական օրենսգիրքը նախատեսում է քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու, պատիժը մեղմացնելու մի շարք ինստիտուտներ: Ընդ որում, կարող են լինել իրադրություններ, որ միաժամանակ առկա լինեն դրանցից մի քանիսի հատկանիշները: Օրինակ՝ հնարավոր է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակել և պատիժը պայմանականորեն չկիրառել: Ընդ որում, այս երկու ինստիտուտների միջև մրցակցությունը բացակայում է: Հարց է առաջանում, կարո՞ղ է արդյոք դատարանը միաժամանակ կիրառել այս երկու ինստիտուտները: Քրեական օրենքը ըստ էության չի արգելում դա, բայց որքանով է նման մոտեցումը ճիշտ:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 15-ի առաջին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք ենթակա են քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե նրանց կատարած արարքը ճանաչված է հանցագործություն դրա կատարման վայրի պետության օրենսդրությամբ, և եթե նրանք չեն դատապարտվել այլ պետությունում: Նշված անձանց դատապարտելիս, պատիժը չի կարող գերազանցել օտա-

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

րերկրյա այն պետության օրենքով նախատեսված պատժի վերին սահմանը, որի տարածքում կատարվել է հանցանքը»: Նշված նորմի գործնական կիրառումը կարող է դժվարություններ առաջացնել: Մասնավորապես, ինչպես վարվել այն դեպքում, երբ ՀՀ տարածքից դուրս կատարված արարքի համար կատարման վայրի պետության օրենսդրությամբ այնպիսի պատիժ է նախատեսված, որը ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի համակարգում առկա չէ:

Կարելի էր շատ օրինակներ բերել, բայց բավարարվենք այսքանով:

Կարծում ենք, որ վերոգրյալը բավարար է ՀՀ քրեական օրենսգրքի արմատական բարեփոխման անհրաժեշտությունը հիմնավորելու համար: Ընդ որում, հայեցակարգային սխալներն ու կրիմինալոգիական իրականության անտեսումը վերացնելը հնարավոր է միայն նոր քրեական օրենսգրքի շրջանակներում, որովհետև հայեցակարգային մեկ դրույթի փոփոխությունը հանգեցնում է բազմաթիվ քրեաիրավական նորմերի և ամբողջ քրեական օրենսգրքի տրամաբանության փոփոխության: Նույնիսկ միայն սխալներն ու հակասությունները վերացնելու դեպքում իրականում խոսքը կարող է նոր քրեական օրենսգրքի մասին լինել, որովհետև սխալներն ու հակասություններն այնքան շատ են, որ ամռչվում են գործող օրենսգրքի հողվածների մոտ 90 տոկոսին, և դրանց շտկումը կհանգեցնի ամբողջ քրեական օրենսգրքի կառուցվածքի ու բովանդակության փոփոխության:

Վերոգրյալի հիման վրա, կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի արմատական բարեփոխումը կարող է իրականացվել նոր քրեական օրենսգրքի ընդունելու ճանապարհով: Իհարկե նոր քրեական օրենսգրքը պետք է պահպանի այն լավագույնը, ինչն առկա է գործող քրեական օրենսգրքում, և զերծ մնա այնպիսի հեղափոխական բնույթի փոփոխություններից, որոնք մեր

պայմաններում կարող են դժվարացնել կամ անհնարին դարձնել դրա կիրառումը:

Քրեական օրենսգրքը պետք է հիմնվի կրիմինալոգիական իրողության վրա և հաշվի առնի այն: Այս տեսանկյունից անչափ կարևոր է հանցակազմերը կառուցելիս, ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքներ նախատեսելիս հաշվի առնել ոչ միայն քրեական իրավունքի դոգմատիկան, այլև բժշկության, հոգեբանության և այլ գիտությունների նվաճումները: Բացի այդ՝ առանձին հանցատեսակների համար սանկցիաները նկարագրելիս պետք է հաշվի առնել ոչ միայն հանցագործության տվյալ տեսակով պատճառվող վնասի չափը, այլև այն, թե հանցագործության այդ տեսակը կատարող անձինք ինչպիսի կրիմինալոգիական բնութագիր ունեն, ինչ հանրային վտանգավորություն են ներկայացնում:

Քրեական օրենսգրքը պետք է հիմնվի «անձի հայեցակարգի» վրա: Անհրաժեշտ է հասկանալ, որ օրենքը պատժում է ոչ թե հանցագործությունը, այլ հանցանք կատարողին: Ըստ այդմ էլ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու, պատիժ նշանակելու, պատժից կամ պատասխանատվությունից ազատելու հարցերը անհրաժեշտ է կարգավորել հիմք ընդունելով ոչ թե հանցագործության պատկանելությունը դասակարգման այս կամ այն խմբին, այլ հանցանք կատարողի անձնավորությունը, նրա հանրային վտանգավորությունը, կրիմինալոգիական բնութագիրը, ուղղման և ռեսոցիալիզացիայի հնարավորությունները:

Անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով հետևողականորեն ապահովել ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը: Դրա համար պետք է օրենսդրորեն կարգավորել իրավաբանական ու փաստական սխալի ինստիտուտները, լուծել մեղքի ձևի ու տեսակի խնդիրը աֆեկտի և հարբածության վիճակում հանրորեն վտանգավոր արարք կատարելու դեպքերում:

Անհրաժեշտ է վերանայել պատժի համակարգը և դրանում նախատեսել ազա-

տագրկմանը այլընտրանք հանդիսացող գործուն պատժատեսակներ, կատարելագործել եղածները, նախատեսել քրեական պատասխանատվությանը այլընտրանք հանդիսացող միջոցներ, կատարելագործել եղածները, ինչը թույլ կտա տնտեսելու քրեաիրավական հարկադրանքը: Քրեաիրավական հարկադրանքի տնտեսումը կարող է իրականացվել նաև Հատուկ մասի հոդվածների սանկցիաներից ազատագրվում պատժատեսակը հնարավորինս բացառելով կամ դրա ավելի կարճ ժամկետներ նախատեսելով (դեպենալիզացիա):

Քրեական օրենսգիրքը պետք է մեծ ուշադրություն դարձնի տուժողի շահերի պաշտպանությանը և պատճառված վնասի հատուցմանը: Այս տեսանկյունից կատարելագործման կարիք ունեն գույքային սանկցիաները: Աշխարհի շատ երկրների քրեական օրենսդրություններում ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտացոլված է այն հանգամանքը, որ դրանք նպատակաուղղված են պատճառված վնասի հատուցմանը: Ընդ որում, այս սանկցիաները խիստ մանրակրկիտ կարգավորում են ստանում:

Անհրաժեշտ է իրականացնել որոշ արարքների ապաքրեականացում և քրեականացում:

Ապաքրեականացումը պետք է վերաբերի այն արարքներին, որոնց քրեականացումը իրականացվել է պահի ազդեցության տակ, մեկ կոնկրետ դեպքի առնչությամբ՝ առանց հաշվի առնելու արարքների քրեականացման կանոններն ու օրինաչափությունները (մասնավորապես ՀՀ քր. օր.-ի հոդվածներ 225.1 314.1, 334.1 և այլն): Ապաքրեականացման են ենթակա նաև ոչ մեծ ծանրության որոշ հանցատեսակներ, որոնք կարող են դասվել վարչական իրավախախտումների շարքը: Բացի այդ՝ մեր կարծիքով կարելի է ապաքրեականացնել որոշ տնտեսական հանցագործություններ, որոնք քաղաքացիաիրավական կարգավորում են ենթադրում (հոդվածներ 191, 198 և այլն):

Քրեականացումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով. միջազգային պարտավորություններ, գլոբալ գործընթացներ, գիտատեխնիկական առաջընթաց (մասնավորապես՝ կիբեռհանցավորություն, գենետիկայի, բժշկագիտության բնագավառում ներկայումս տարածում ստացող հանրավտանգ արարքներ և այլն):

Պետք է խստացնել քրեական պատասխանատվությունը կրկնահանցագործների նկատմամբ՝ նախատեսելով նրանց նկատմամբ պատժի նշանակման այնպիսի կարգ, որն իրականում կհամապատասխանի այդ անձանց հանրային վտանգավորության աստիճանին:

Անհրաժեշտ է ապահովել քրեական օրենսգրքում նորմերի ձևակերպման հստակությունը, անհակասականությունը, իրավական որոշակիությունը, բացառել լեզվական անճշտությունները, հակասությունները այլ իրավական ակտերի հետ:

Կարծում ենք՝ քրեական օրենսգիրքը պետք է ունենա հասկացությունների ցանկ՝ դրանց բովանդակության պարզաբանմամբ, ինչը զգալիորեն կհեշտացնի իրավակիրառողի գործը, կապահովի հասկացությունների միատեսակ ըմբռնումը և օրենքի միատեսակ մեկնաբանությունն ու կիրառումը:

Քրեական օրենսգիրքը պետք է հնարավորինս մանրամասն կարգավորի հարցերը և կարգավորի ամենատարբեր հնարավոր իրադրությունները: Կարծում ենք, որ այն՝ ինչը կարելի է օրենքով կարգավորել, պետք է կարգավորվի: Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի պատժի նշանակմանը, քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատելուն վերաբերող դրույթների հստակ, մանրամասն նկարագրությունը:

Նշված միջոցառումները կարող են էապես նվազեցնել քրեական օրենսգրքի կոռուպցիոն ռիսկայնությունը:

Պետք է ապահովել քրեական օրենսգրքի համապատասխանությունը վավերացված միջազգային պայմանագրերին և ՀՀ Սահմանադրությանը:

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

**ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ
ԳԻՏԱԿՑՎԱԾ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ**

Դավիթ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, իրավ. գիտ. թեկնածու

Հայաստանի Հանրապետության 2003 թ. քրեական օրենսգրքը, իր բազմաթիվ թերություններով հանդերձ, իր ժամանակի համար կատարել է կարևոր պատմական առաքելություն՝ ապահովելով անցումը ժողովրդավարական և իրավական պետությանը բնորոշ քրեական քաղաքականության: Այնուհանդերձ, ներկայումս ՀՀ քրեական օրենսգրքն արդեն անհուսալիորեն հետ է մնացել մեր երկրի հասարակական զարգացումից՝ դիտարկված թե՛ ներքին և թե՛ արտաքին գործոնների համատեքստում: Դրանով պայմանավորված՝ քրեական օրենսգրքում շարունակաբար կատարվում են փոփոխություններ և լրացումներ: Այսպես, 2003 թվականից առ այսօր քրեական օրենսգրքում կատարվել են մոտ 300 փոփոխություններ, ընդ որում՝ դրանք ոչ միայն վերաբերում են հատուկ մասի առանձին հանցակազմերին, այլև ընդհանուր մասին: Դատական պրակտիկան իր հերթին է վեր հանում բազմաթիվ խնդիրներ, և դրանց այն մասը, որը հնարավոր է կարգավորել դատական իշխանության ունեցած սահմանադրական լիազորությունների շրջանակում, ստանում է իր լուծումը:

Սակայն ո՛չ դատական իշխանության և ո՛չ էլ օրենսդիր իշխանության հատվածական մոտեցման պարագայում ՀՀ քրեական օրենսդրության որակական կատարելագործման ու արդիականացման խնդիրը լուծել հնարավոր չէ, քանի որ այն ենթադրում է համակարգային մոտեցում, իսկ դա

ենթադրում է մշակել ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգ, որի հիման վրա ստեղծել նոր օրենսգիրք:

Նոր օրենսգրքի հայեցակարգը, մեր պատկերացմամբ, պետք է լուծի մի քանի հիմնարար խնդիր:

Առաջին, քրեական օրենսդրությունը դարձնել ժամանակակից տնտեսական հարաբերություններին համահունչ: Հիմնախնդրի խորությունը և կարևորությունը այս ոլորտում պահանջում են քրեական օրենքի արմատական վերափոխում, որը չի կարող իրականացվել մասնատված նորարարություններով, և անհրաժեշտ է համալիր մոտեցում՝ քրեական օրենսգրքի բազմաթիվ դրույթների վերանայում ինչպես հատուկ, այնպես էլ ընդհանուր մասում: Դրա արդյունքում պետք է ձևավորվի հայեցակարգային նոր մոտեցում շուկայական հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում: Այս իմաստով հայեցակարգի նպատակը պետք է լինի վեր հանել երկրի կարևորագույն տնտեսաիրավական խնդիրները և դրանց լուծումներ առաջարկել: Անհրաժեշտ է գտնել կարգավորիչ մասնավոր-իրավական ու հանրային-իրավական ճյուղերի՝ մի կողմից (քաղաքացիական իրավունք, հարկային իրավունք, մաքսային իրավունք և այլն), և քրեական իրավունքի՝ մյուս կողմից, հարաբերակցության նոր մոդել, որի դեպքում քրեական իրավունքը խոչընդոտներ չի ստեղծի ՀՀ տնտեսական հարաբերությունները հիմնարար սկզբունքներին՝ սեփականության իրավունքի երաշխավորմանը, պայմանագրերի ազատությանը ու ազատ ձեռներեցությանը՝ հուսալիորեն պաշտպանելով դրանք ոտնձգություններից:

Նոր քրեական օրենսգրքի հայեցակարգի առջև դրված **երկրորդ խնդիրը** վարչական և քրեական իրավախախտումների հարաբերակցության հարցի հստակ տարրոռոշումն է:

Այս առումով առկա է հարցի լուծման երկու ճանապարհ՝ կա՛մ քրեական օրենսդրությունը ներառում է նաև վարչական իրավախախտումները, այդ թվում՝ բոլոր իրավախախտումները, որոնք ներկայումս բացի ՎԻՎՕ-ից ամրագրված են նաև հարկային, մաքսային, բնապահպանական և այլ օրենսդրությամբ, կա՛մ քրեական օրենսգրքի և ՎԻՎՕ-ի միջև իրականացվում է իրավախախտումների վերաբաշխում. ոչ մեծ ծանրության մի շարք հանցակազմեր ապաքրեականացվում են, և դրանց համար նախատեսվում է վարչական պատասխանատվություն, իսկ ներկայումս վարչական համարվող իրավախախտումների այն մասը, որոնց սանկցիաները իրենց խստությամբ համապատասխանում են քրեական ոլորտին, քրեականացվում է:

Այս մոտեցումն ուղղակիորեն հիմնվում է ԵՆՆԿ-ի «Քրեական արդարադատության պարզեցման» մասին թիվ R (87) 18 հանձնարարականի վրա:

Ներկայումս տարբեր երկրներում առկա են նշված երկու մոդելներն էլ:

Քրեական և վարչական իրավահարաբերությունները գեներտիկորեն կապված են, երկուսի հիմքում էլ ընկած են կարգավորման նույն մեթոդը, առարկան, երկուսն էլ լուծում են գրեթե նույն խնդիրները և այլն: Դրա վկայությունն է այն, որ հաճախ ընդամենը իրավախախտումների օբյեկտիվ կողմի հատկանիշ համարվող հետևանքով է որոշվում՝ արարքը քրեական՞ իրավախախտում է, թե՞ վարչական:

Վարչականի և քրեականի միավորումը կամ վերաբաշխումը նախևառաջ կարևոր է ՄԻԵԿ-ի երաշխիքները բնույթով կամ սանկցիայով քրեական հանդիսացող այն իրավախախտումների վրա տարածելու

տեսանկյունից, որոնք ներկայումս ձևակերպված են որպես վարչական: Դրա արդյունքում այդպիսի արարքների համար մեղադրվող անձը կստանա պաշտպանության իրավունքի և վարութային այլ իրավունքների երաշխավորման առավել բարձր մակարդակ:

Այս հանգամանքն է շեշտադրվել, մասնավորապես, «Պայքար և հաղթանակ ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի» գործով ՄԻԵԿ-ի կողմից 2007 թվականի դեկտեմբերի 20-ին կայացված վճռում: Սույն գործով ՄԻԵԿ-ն արձանագրել էր, որ «Հարկերի մասին» և «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքներով սահմանված տույժերի ու տուգանքների նպատակը հարկատուի վարքագծի պատճառով առաջացած հնարավոր ծախսերի նյութական հատուցումը չէ, այլ հարկատուների նկատմամբ ճնշում գործադրելն է, որպեսզի վերջիններս կատարեն իրենց իրավական պարտավորությունները, ինչպես նաև այդ պարտավորությունները խախտելու համար նրանց պատժելն է: Այսպիսով, սանկցիաները և՛ կանխարգելիչ են, և՛ պատժիչ: Նշված հանգամանքը ՄԻԵԿ-ը բավարար է համարել իրավախախտման *քրեական* բնույթը հաստատելու համար՝ եզրահանգելով, որ այդպիսի իրավախախտման համար մեղադրվող անձը պետք է օժտված լինի արդար դատաքննության կոնվենցիոն երաշխիքների ողջ համակարգով:

Տուգանքի վերաբերյալ ՄԻԵԿ-ի դատողություններում համոզվելու համար դիտարկենք, օրինակ, ՎԻՎՕ-ի 48-րդ հոդվածի սանկցիան: Նշված հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում պետական և/կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնական զավթելու և դրա հետևանքները չվերացնելու համար և առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի 2500-պատիկի չափով: Այդ չափը շուրջ 85 անգամ ավելին է,

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ

քան քրեական օրենսգրքով նախատեսված տուգանքի նվազագույն չափը:

Քրեական և վարչական իրավահարաբերությունների հարաբերակցության փոփոխումը հանգեցնելու է նրան, որ անհրաժեշտություն կառաջանա վերանայելու նախ՝ հանցագործության սուբյեկտի հասկացությունը (իրավաբանական անձին հանցագործության սուբյեկտ դիտելու մասով), երկրորդ՝ հանցակազմերը, երրորդ՝ սանկցիաները, չորրորդ՝ հանցագործությունների դասակարգման չափանիշները և այլն: Օրինակ՝ քրեական օրենսգրքով նախատեսված ոչ մեծ ծանրության արարքներ կատարած անձին «հանցագործ» պիտակով խարանելը, կարծում ենք, պետք է համարվի աննպատակահարմար, ուստի պետք է առավել մեղմ քրեական իրավախախտումները «զանցանք» անվանադրելու հարցը:

րը, հատկապես երբ հայցը ներկայացված է եղել մինչդատական վարույթում, կամ եթե այդ հիմքերը ի հայտ են եկել դատական քննության ընթացքում: Այս առումով ԴՅ քրեական դատավարության օրենսգրքում առկա են անհրաժեշտ իրավական նախադրյալներ. խոսքը, մասնավորապես քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերի մասին է, որոնց համաձայն՝ **նույն քաղաքացիական հայցով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշման առկայությունը, հայցից քաղաքացիական հայցվորի հրաժարումն ընդունելու կամ հաշտության համաձայնությունը հաստատելու մասին դատարանի որոշման առկայությունը, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճիռի առկայությունը, որով հայցը մերժվել կամ լրիվ կամ մասնակի բավարարվել է, բացառում են քաղաքացիական հայցի հարուցումը:** Ինչպես տեսնում ենք, օրենքում խոսվում է հիշյալ պայմանների առկայության դեպքում հայց հարուցելը բացառելու մասին, սակայն թե ինչ պետք է հասկանալ բացառել ասելով, օրենքից պարզ չէ: **Դետևաբար հարց է ծագում. օրինակ, եթե հիշյալ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում հայցն այնուամենայնիվ հարուցվում է, դատարանն ի՞նչպետք է անի:** Կարծում ենք՝ վերոնշյալ հիմքերի առկայության դեպքում հայցով վարույթը կարճելը, երբ հայցը ներկայացված է եղել մինչդատական վարույթում, կամ եթե այդ հիմքերը ի հայտ են եկել դատական քննության ընթացքում, հարցի լուծման առավել տրամաբանական տարբերակ է: Նման իրավակարգավորում սահմանված է նաև ԴՅ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, որի 109-րդ հոդվածում սահմանված հայցով վարույթը կարճելու հիմքերը գրեթե նույնն են, ինչ վերոնշյալ հիմքերը:

¹⁹ Այս մասին տե՛ս Ս. Մարաբյանի 2006 թվականի հունիսի 13-ի թիվ 100 որոշումը:

²⁰ Դատավորի պարտականության մասին մանրամասն տե՛ս Ս. Մարաբյան, Եզված աշխատությունը, Պետություն և իրավունք, 2010, թիվ 2(48), էջեր 64-76:

ПРОБЛЕМЫ ПОДГОТОВКИ ГРАЖДАНСКОГО ИСКА К СУДЕБНОМУ ЗАСЕДАНИЮ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ РА

Сергей МАРАБЯН

*Начальник организационно-правового управления судебного департамента РА,
Соискатель кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ*

В статье автор обсуждает проблемы подготовки гражданского иска судебному разбирательству.

В действующем законодательстве уголовного судопроизводства, в той части норм, регулирующих подготовку дел к судебному разбирательству, нет даже намека на проверку наличия условий и при необходимости принятия соот-

ветствующих мер для рассмотрения гражданского иска, что в судебной практике часто дает основание для нарушения законных интересов и имущественных прав личностей.

Анализируя судебную практику, опыт стран СНГ и специализированную литературу, автор приходит к тому заключению, что в законе надо урегулировать такие вопросы, какие действия должен предпринять судья в том случае, когда иск был предъявлен в досудебном процессе, а также в случае предъявления иска в суд, как гарантию обеспечения законных интересов и имущественных прав личностей.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սերգեյ ՄԵՂՐՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. թեկն., դոցենտ

Դատական ապացուցումը ճիշտ կազմակերպելու, ապացուցողական նյութի լրիվությունը, վարույթի ուղղվածությունն ու կանոնավոր ընթացքն ապահովելու համար կարևոր է այն հարցը, թե ով պետք է վկայակոչի գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները, ով պետք է դատարանին ներկայացնի որոնվող փաստերի առկայությունը կամ բացակայությունը հաստատող փաստական տվյալներ, այսինքն՝ այն հարցը, թե դատավարության մասնակիցներից ում վրա է ընկնում ապացուցման ծանրությունը (լատիներեն «onus probandi» եզրույթից, որը թարգմանաբար նշանակում է «ապացուցման բեռ»):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությունը պարտավորեցնում է դատարանին կողմերի հետ քննարկել և նրանց պահանջների ու առարկությունների հիման վրա որոշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը (ապացուցման առարկան), որից հետո օրենքով սահմանված կանոններով նրանց միջև բաշխել ապացուցման պարտականությունը և սահմանել ապացույցներ ներկայացնելու ժամկետները (ՔԴՕ 48 հոդվ., մաս 2, ՔԴՕ 149՝ հոդվ., մաս 2, կետ 5): Միաժամանակ օրենքը սահմանում է, որ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը (ՔԴՕ 48 հոդվ., մաս 1):

Շարադրված իրավադրույթների բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ ՔԴՕ 47-րդ հոդվածում սահմանված ապացուցման միջոցներով իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքների առկայությունը կամ բացակայությունն ապացուցելու ծանրությունը՝ ապացուցման բեռը, օրենսդրի կողմից դիտվում է որպես գործին մասնակցող անձի պարտականություն:

Ինչպես ցանկացած սուբյեկտիվ պարտականություն, ապացուցման պարտականությունը ևս ունի իր բովանդակությունը: Քաղաքացիական դատավարական գրականության մեջ համոզիչ կերպով հիմնավորվում է այն տեսակետը, որ ապացուցման պարտականությունն ունի փոխկապակցված, սակայն միևնույն ժամանակ բովանդակային առումով և նշանակությամբ ոչ համարժեք երկու տարր՝

1) *Պահանջների կամ առարկությունների հիմքում որոշակի փաստական հանգամանքներ դնելու պարտականություն (հաստատման ծանրություն)*, որը դիտարկվում է որպես պահանջները և առարկությունները փաստերով հիմնավորելու, այլ կերպ ասած՝ հայցի, դրա դեմ բերվող առարկությունների և վերջիններիս դեմ բերվող նկատառումների հիմքում որոշակի փաստական հանգամանքներ դնելու և օրենքով սահմանված ձևով դրանք դատարանին ներկայացնելու անհրաժեշտություն:

2) *Ապացույցները ներկայացնելու պարտականություն (բացահայտման ծանրություն)*, որը դիտվում է գործին մասնակցող անձի կողմից որպես պահանջի կամ առարկության հիմք վկայակոչված կամ ներկայացված պահանջի կամ առարկության հիմքում դատարանի նախաձեռնությամբ

դրված փաստական հանգամանքները հաստատող ապացույցները դատարանին և գործին մասնակցող մյուս անձանց ներկայացնելու անհրաժեշտությունը:

Պահանջների կամ առարկությունների հիմքում որոշակի փաստական հանգամանքներ դնելու պարտականություն: Հաստատման ծանրությունն ապացույցները բացահայտելու, դրանք ներկայացնելու պարտականությունից սահմանազատելու անհրաժեշտությունը բխում է այն իրողությունից, որ որոնվող փաստերը վկայակոչելը, դրանք հաստատող ապացույցների մասին հայտարարելը և վերջիններս դատարան ներկայացնելը տարբեր գործողություններ են: Դատական ապացուցումն առաջին հերթին ենթադրում է ոչ թե որոշակի թեզիսի հիմնավորում, այլ դրա առաջադրում:

Քննարկվող պարտականության գոյության մասին կարելի է եզրակացություն անել ՔԴՕ-ի 48, 87, 95 և մի շարք այլ հոդվածների առանձին դրույթների վերլուծության հիման վրա:

ՔԴՕ 87-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը հայցով դատարան դիմող սուբյեկտներին պարտավորեցնում է հայցադիմումում նշել այն հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները: Քանի որ և՛ հակընդդեմ հայցը, և՛ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնելով անձի հայցը ներկայացվում են հայց հարուցելու ընդհանուր կանոններով, նշված պահանջը տարածվում է նաև դրանց վրա: Դեռ ավելին, ՔԴՕ 96-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ հակընդդեմ հայցով հայցվորը (սկզբնական պատասխանողը), բացի իր հայցապահանջների հիմքում դրված հանգամանքները վկայակոչելուց, գործնականում պետք է նշի նաև հանգամանքներ, որոնք վկայում են այն մասին, որ հակընդդեմ պահանջն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը կամ հակընդդեմ հայցի բավարարումը լրիվ կամ մասամբ կհանգեցնի սկզբնական հայցի մերժման,

կամ հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև առկա է փոխադարձ կապ, ու դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել վեճի առավել արագ և ճիշտ լուծում:

Դատավարական օրենսդրությունը հաստատման ծանրություն է դնում նաև պատասխանողի վրա (ընդ որում՝ և՛ սկզբնական, և՛ հակընդդեմ, և՛ երրորդ անձի հայցով):

Գործող ՔԴՕ-ն հայցադիմումի պատասխան ներկայացնելը դիտում է որպես պատասխանողի պարտականություն, որի չկատարումը դատարանը կարող է գնահատել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում (ՔԴՕ 95 հոդվ., մասեր 1, 5): Պատասխանողը պարտավոր է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դատարան ուղարկել հայցադիմումի պատասխան: Օրենքը սահմանում է, որ հայցադիմումի պատասխանը, ի թիվս այլ տեղեկությունների, պետք է պարունակի հայցում ներկայացված յուրաքանչյուր պահանջն ընդունելու կամ դրա դեմ մասնակի կամ ամբողջությամբ առարկելու մասին պատասխանողի դիրքորոշումը: Վերջին դեպքում պատասխանում պետք է անդրադարձ կատարվի հայցի հիմքում ընկած այն փաստերին, որոնք պատասխանողը չի ընդունում, ինչպես նաև պետք է նշվեն այն փաստերը, որոնք ընկած են առարկությունների հիմքում (ՔԴՕ 95 հոդվ., մաս 2):

Ինչպես հայտնի է, գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հայցվորը հայցադիմումի լրացում ներկայացնելու միջոցով կարող է փոփոխել հայցի առարկան կամ հիմքը (ՔԴՕ 32, 149⁷ հոդվ.): Բնականաբար, հայցի հիմքի փոփոխությունը ենթադրում է հայցադիմում ներկայացնելու պահին հայցապահանջների հիմքում դրված որոշակի հանգամանքների փոփոխություն նոր հանգամանքներով, և եթե դատարանն այդպիսի փոփոխությունը թույլատրելի է համարում, հայցադիմումի լրացումը ՔԴՕ 93-րդ հոդվածով սահման-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

ված կարգով ուղարկվում է պատասխանողին, որն էլ, իր հերթին, այն ստանալուց հետո պարտավոր է ՔԴՕ 95-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում դատարան ներկայացնել դրա վերաբերյալ իր պատասխանը: Ակնհայտ է, որ և՛ հայցադիմում լրացնելիս, և՛ դրա դեմ առարկություններ ներկայացնելիս օրենքը պարտավորեցնում է գործին մասնակցող անձանց՝ նշված դատավարական փաստաթղթերում վկայակոչել այն փաստական հանգամանքները, որոնք ընկած են իրենց դիրքորոշման հիմքում:

ՔԴՕ 28-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը գործին մասնակցող անձանց վերապահում է դատավարության այլ մասնակիցների փաստարկների (այդ թվում՝ առարկությունների) դեմ առարկելու իրավունք: Ընդ որում, անձը կարող է առարկել պահանջի կամ դրա դեմ ներկայացված առարկության դեմ՝ դրա հիմքում դրված հանգամանքները ինչպես պարզապես ժխտելու (պարզ կամ փաստերով չհիմնավորված առարկություն), այնպես էլ որոշակի հանգամանքներ վկայակոչելով (որակյալ կամ փաստերով հիմնավորված առարկություն):

Պարզ առարկությունը (ժխտումը) կարող է ներկայացվել առաջին ատյանի դատարանում գործը դատաքննության նախապատրաստելու կամ դատաքննության ընթացքում: Ինչ վերաբերում է այդպիսի առարկություններին, որոնց հիմքում դրվում են որոշակի փաստական հանգամանքներ, ապա ՔԴՕ-ի վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ դրանք գործնականում կարող են ներկայացվել բացառապես գործը դատաքննության նախապատրաստելու փուլերում՝ մինչև դատարանում գործի դատաքննությունը սկսելը: Նման եզրակացությունը բխում է հետևյալ դրույթների համակարգային վերլուծությունից՝

- «Գործին մասնակցող յուրաքանչյուր

անձ մինչև դատաքննությունը սկսվելը պարտավոր է գործին մասնակցող մյուս անձանց առջև բացահայտել տվյալ պահին իրեն հայտնի այն ապացույցները, որոնց վրա նա հղում է կատարում որպես իր պահանջների և առարկությունների ապացուցման հիմք, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով» (ՔԴՕ 48 հոդվ., մաս 4).

- «Գործին մասնակցող անձինք իրավունք ունեն հղում կատարելու միայն այն ապացույցների նկատմամբ, որոնց հետ գործին մասնակցող մյուս անձինք սույն օրենսգրքով սահմանված կարգով ծանոթացել են նախօրոք» (ՔԴՕ 48 հոդվ., մաս 5).

- «Դատաքննությունն սկսվելուց հետո գործին մասնակցող անձի ներկայացրած լրացուցիչ ապացույցներն ընդունում է դատարանը, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է մինչև դատաքննությունը սկսվելը նման ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով» (ՔԴՕ 48 հոդվ., մաս 8):

Ակնհայտ է, որ պահանջների և առարկությունների հիմքում որոշակի փաստական հանգամանքներ դնելը և դրանք դատարանին ներկայացնելը բավարար չեն համապատասխան հանգամանքի գոյությունը հաստատելու համար: Տվյալ հանգամանքի ապացուցման համար կողմը դատարանին պետք է ներկայացնի նաև այն հաստատող ապացույցներ: Իսկ քանի որ վերը նշված կանոններն ընդհանուր առմամբ բացառում են գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում չներկայացված ապացույցների ընդունումը դատարանի կողմից և դրանց հետագոտումը դատական միտում, գործի դատաքննության ընթացքում նոր հանգամանքներ վկայակոչելը գործնականում իմաստազրկվում է: Բացի դրանից, վերը նշված կանոնները, որոնք, փաստորեն, վերաբերում են մինչև դատաքննությունն ապացույցների բացահայտմանը, ըստ էության ուղղակիորեն արգելում են մինչև դատաքննությունը չբացահայտված ապացու-

ցողական փաստերը դատական նիստում վկայակոչելը: Ինչպես նշվել է, ապացուցողական փաստերը հաստատվելուց հետո հանդես են գալիս որպես գործի լուծման համար նշանակություն ունեցող իրավաբանական փաստերի հաստատման միջոց (ապացույց):

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ քաղաքացիական դատավարական օրենսդրությունը գործին մասնակցող անձանց պարտավորեցնում է սահմանված ձևով, կարգով և ժամկետներում իրենց պահանջները և առարկությունները հիմնավորել որոշակի փաստական հանգամանքներով, այլ կերպ ասած՝ նրանց վրա դնում է հաստատման ծանրություն:

Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ գործող օրենսդրությունը պահանջների և առարկությունների հիմքերը վկայակոչելու պարտականությանը չի տալիս այն բովանդակությունը և նշանակությունը, որն ընդունված է մրցակցային դատավարության անգլո-ամերիկյան «մաքուր» մոդելի շրջանակներում: Անգլո-ամերիկյան համակարգում ապացուցման առարկան ուրվագծվում է դատարանից անկախ՝ բացառապես կողմերի պահանջների և առարկությունների հիման վրա: Դատարանը պարտավոր է վեճը լուծել բացառապես կողմերի վկայակոչած փաստական հանգամանքների հիման վրա: Եթե վիճող կողմը սխալ է կողմնորոշվում իր պահանջների կամ առարկությունների հիմքում որոշակի հանգամանքներ դնելիս և դրանք դատարանին ներկայացնելիս, ինքն էլ կրում է դրա անբարենպաստ հետևանքների ռիսկը: ԱՄՆ-ում և Անգլիայում դատարանն իրավունք չունի կողմերի ուշադրությունը հրավիրել իրավական նորմերով արժևորող հանգամանքներին և իր նախաձեռնությամբ դրանք ներառել ապացուցման ենթակա հանգամանքների կազմում: Այստեղ դատարանն ապացուցմանն օժանդակող գործառույթներ չի իրականացնում⁴:

ՀՀ գործող օրենսդրությունը, հաստատ-

ման ծանրությունը կողմերի վրա դնելով հանդերձ, սահմանում է «մեղմ» պահանջներ⁵, որոնցում արտացոլվում է օրինականության սկզբունքի գերակայությունը մրցակցության նկատմամբ: Ինչպես նշվել է, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը Հայաստանի քաղաքացիական դատավարությունում որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա և ղեկավարվելով կիրառման ենթակա իրավական նորմերի բովանդակությամբ: Դատարանն ապացուցման առարկան որոշելիս չի կարող սահմանափակվել գործին մասնակցող անձանց ներկայացրած փաստերով և իր նախաձեռնությամբ դրա մեջ պետք է մտցնի նաև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող այլ փաստեր: Նման իրավակարգավորումը, որը հատուկ է խառը մրցակցային դատավարություն ունեցող գրեթե բոլոր երկրների դատական համակարգերին, հիմնականում պայմանավորված է դատարանի օժանդակող գործառույթներով: Վերջիններիս օրենսդրական ամրագրումն օբյեկտիվ անհրաժեշտություն է իրավագիտակցության ոչ բարձր մակարդակի, բնակչության սոցիալական որոշակի խավերի անվճարունակության և քաղաքացիական գործերով անճար իրավաբանական օգնություն ստանալու հնարավորության բացակայության պայմաններում քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների պաշտպանության համար:

Ապացուցման առարկան որոշելու դատարանի պարտականության ամրագրումը չի նշանակում, որ օրենքը դատարանի վրա ևս դնում է հաստատման ծանրություն⁶: Դատարանը, ըստ գործող օրենսդրության, ապացուցելու պարտականություն չի կրում: Իրավակիրառ պրակտիկայում արտահայտված այն կարծիքը, որ ապացուցման առարկայի մեջ որոշակի հանգամանքներ մտցնելով կամ կողմի վկայակոչած հանգամանքները գործի լուծման հա-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

մար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակից հանելով՝ դատարանը խախտում է մրցակցության սկզբունքը՝ ըստ էության իրականացնելով կողմի գործառույթ,⁸ հիմնավորված չի թվում: Դատարանի իրավասությունը և գործին մասնակցող անձի ապացուցման պարտականությունը (ավելի կոնկրետ՝ հաստատման ծանրությունը) պետք է դիտարկել տարբեր հարթություններում: Ապացուցման առարկան որոշելիս դատարանն իրականացնում է օրենսդրությամբ իր առջև դրված խնդիրները՝ ուրվագծելու այն փաստական հանգամանքների շրջանակը, որոնք գործն ըստ էության լուծելու համար ունեն էական նշանակություն, թույլատրելիության և վերաբերելիության կանոններից ելնելով՝ կանխորոշելու դատաքննության սահմանները և բացառելու գործի քննության ընթացքում ավելորդ հանգամանքներ և ապացույցներ հետազոտելու անհրաժեշտությունը: Գործին մասնակցող անձինք էլ հետապնդում են իրենց նպատակները, որոնք դատավարության ընդհանուր խնդիրների և նպատակների հետ կարող են չհամընկնել:

Ուշագրավ է, որ, ամրագրելով ապացուցման պարտականությունը գործին մասնակցող անձանց միջև բաշխելու կանոնները, օրենսդիրը ՔԴՕ-ի 48-րդ և 149⁸ հոդվածներում նկատի է ունեցել ոչ թե պահանջների կամ առարկությունների հիմքում որոշակի փաստական հանգամանքներ դնելու և դրանք դատարանին ներկայացնելու պարտականությունը (հաստատման ծանրությունը), այլ ապացույցները ներկայացնելու պարտականությունը (բացահայտման ծանրությունը), որն ունի ինքնուրույն բովանդակություն և նշանակություն: ՔԴՕ 149⁸ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ դատարանը կողմերի հետ քննարկում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը և ապացուցման

պարտականության բաշխման կանոններին համապատասխան՝ կողմերի միջև բաշխում է ապացուցման պարտականությունը, ինչպես նաև սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետները: Յետևում է, որ պահանջների կամ առարկությունների հիմքում որոշակի փաստական հանգամանքներ դնելու, դրանք բացահայտելու և դատարանին ներկայացնելու պարտականությունը, ընդհանուր կանոնի համաձայն, կատարվում է մինչև ապացուցման առարկան դատարանի կողմից որոշելը:

Ապացույցները ներկայացնելու (բացահայտելու) պարտականություն: Ապացույցները ներկայացնելը գործին մասնակցող անձանց գործառույթն է: ՔԴՕ 49 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապացույցները ներկայացնելու պարտականությունը կրում են բացառապես գործին մասնակցող անձինք:

Քանի որ ապացուցման ողջ պարտականությունը գործող օրենսդրությունը դնում է գործին մասնակցող անձանց վրա, իսկ դատարանն օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու պարտականություն չի կրում, կարելի է եզրակացնել, որ վերջինս իր նախաձեռնությամբ ապացույցներ ձեռք բերելու իրավունք չունի⁹: Մրցակցային դատավարության պայմաններում դատարանը կարող է իրականացնել բացառապես մրցակցությանն օժանդակող, այն երաշխավորող գործառույթներ¹⁰: Մասնավորապես՝ ըստ ՔԴՕ 49-րդ հոդվածի 2-րդ մասի՝ դատարանն իրավասու է գործին մասնակցող անձի միջնորդությամբ անհրաժեշտ ապացույցն իր որոշմամբ պահանջել գործին մասնակցող կամ չմասնակցող այլ անձից, որի մոտ այն գտնվում է, եթե միջնորդող կողմը միջնորդության շրջանակներում հիմնավորի տվյալ ապացույցն ինքնուրույն ձեռք բերելու անհնարինությունը: Բացի այդ, կողմերի միջնորդությամբ, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև իր նախաձեռնությամբ դատարանը լուծում է փորձաքննություն նշանակելու, դատական նիստին փորձագետներ, վկաներ կան-

չելու, թարգմանիչ նշանակելու, տեղում իրեղեն և գրավոր ապացույցներն ուսումնասիրելու հարցերը (ՔԴՕ 149⁸ հոդվ., մաս 1, կետ 6):

Ռ. Գ. Պետրոսյանի կարծիքով, որի հետ համամիտ ենք նաև մենք, օրինականության ապահովման շահերից ելնելով և հաշվի առնելով դատավարության կողմերի իրավագիտակցության (նաև՝ օրենքների իրազեկ լինելու), ներկայացուցիչ ունենալու նրանց նյութական հնարավորությունների, փաստաբանական ծառայության ներկա մակարդակը, մրցակցության սկզբունքն իրացնելու հարցում դատարանին նման օժանդակող դեր վերապահելն օբյեկտիվորեն հիմնավորված են¹¹:

Գործնական կարևոր նշանակություն ունի ապացույցները ներկայացնելու պարտականության իրականացման պահը, այսինքն՝ այն հարցը, թե դատավարության որ փուլում կարող են և պետք է ներկայացվեն գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող ապացույցները: Ոչ պակաս կարևոր է նաև այն, թե ում և ինչ ձևով պետք է ներկայացվեն ապացույցները:

2007 թվականին իրականացված դատաիրավական բարեփոխումների ընթացքում ՔԴՕ-ում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում ՀՀ-ում զրեթե լուծվեց մինչև դատաքննությունը բոլոր հնարավոր ապացույցները բացահայտելու պարտականությունն օրենքով սահմանելու խնդիրը:

Բանն այն է, որ մինչև 2007 թվականին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելը դատավարական օրենսդրությունը գործին մասնակցող անձանց պարտավորեցնում էր հայցադիմումում և դրա դեմ ներկայացվող պատասխանում պարզապես վկայակոչել պահանջների և առարկությունների հիմքում դրված հանգամանքները հաստատող ապացույցները, միաժամանակ ոչ միայն չէին սահմանափակվում վերջիններս ներկայացնելու ժամկետները (ապացույցները կարող էին

ներկայացվել ինչպես մինչև դատաքննությունը, այնպես էլ դատաքննությունը սկսվելուց հետո, ընդ որում՝ անկախ դրանց մասին նախօրոք հիշատակելու հանգամանքից), այլ նաև անհրաժեշտ լրիվությամբ չէր կարգավորվում նշված պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքների հարցը: Օրենքը չէր պահանջում (ի դեպ՝ այսօր էլ չի պահանջում) հայցադիմումում հիշատակել բոլոր ապացույցները, և գործնականում հայցադիմումները վերադարձվում էին միայն այն դեպքում, երբ դրանցում ընդհանրապես վկայակոչված չէր հայցապահանջները հաստատող ապացույցներ: Պատասխան ներկայացնելն էլ դիտվում էր որպես պատասխանողի իրավունք: Հայցադիմումի պատասխան չներկայացնելը կամ ներկայացված պատասխանում ապացույցները չվկայակոչելը որևէ իրավական հետևանք առաջացնել չէին կարող: Հայցադիմումի պատասխան ներկայացնելու ինստիտուտի մասին խոսելիս Ե. Գ. Գոյդեմկոն իրավացիորեն նշում է, որ այն իրավիճակը, երբ պատասխան ներկայացնելը հանդիսանում է ոչ թե պատասխանողի պարտականություն, այլ իրավունք, խախտում է կողմերի դատավարական իրավահավասարության սկզբունքը, քանի որ պատասխանողին միշտ ուղարկվում են հայցադիմումի և դրա կից փաստաթղթերի պատճենները, և նա ունենում է հայցի դեմ պաշտպանվելու համար նախապես պատրաստվելու հնարավորություն, իսկ հայցվորը հաճախ անտեղյակ է մնում այն հանգամանքներից և ապացույցներից, որոնք պատասխանողը գործի հետագա դատաքննության ընթացքում դնում էր իր առարկությունների հիմքում¹²:

Որպես նման իրավակարգավորման հետևանք՝ ապացուցողական նշանակություն ունեցող նյութերը դատարան և գործին մասնակցող անձանց էին ներկայացվում դատավարության ողջ ընթացքում՝ ընդհուպ մինչև գործով դատաքննությունն ավարտելու պահը, իսկ դա ոչ միայն անբա-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

րենսպաստ դրության մեջ էր դնում հակառակ կողմերին, որոնք զրկվում էին իրենց հակափաստարկները մշակելու և դրանք հաստատող ապացույցները հայթայթելու և դատարան ներկայացնելու հնարավորությունից, այլ նաև խոչընդոտում էր դատավարության կանոնավոր ընթացքը:

Խորհրդային ժամանակաշրջանի դատավարական օրենսդրությանը հատուկ նման իրավակարգավորման պայմաններում 1998 թ. ընդունված ՔԴՕ-ի կիրառման բավականին երկարատև պրակտիայի ընթացքում ի հայտ եկան նաև մի շարք այլ արատավորող երևույթներ, որոնք քաղաքացիական գործերն անընդհատ հետաձգելու, գործի քննության ժամկետներն անհարկի խախտելու (ձգձգելու), դատավարական իրավունքները գործին մասնակցող անձանց կողմից չարաշահելու պատճառ էին հանդիսանում, բացասաբար էին անդրադառնում վարույթի կանոնավոր զարգացման, դատարանի ներքին համոզման ձևավորման, կայացվող դատական ակտերի օրինականության ու հիմնավորվածության և, վերջին հաշվով, սուբյեկտների իրավունքներն արդյունավետ միջոցներով պաշտպանելու իրավունքի իրացման ու դատական իշխանության հեղինակության վրա:

Դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի շրջանակներում խնդիր դրվեց կանոնակարգելու գործը պատշաճ ձևով դատաքննության նախապատրաստելու, այդ թվում նաև՝ մինչև դատաքննությունը սկսելն ապացույցները լիովին բացահայտելու խնդիրը, որը լուծելու անհրաժեշտությունը քննարկվել է մի շարք դատավարագետների աշխատություններում¹³:

Օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու արդյունքում¹⁴ ՔԴՕ 48-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվեց կանոն առ այն, որ գործին մասնակցող յու-

րաքանչյուր անձ մինչև դատաքննությունը պարտավոր է գործին մասնակցող մյուս անձանց առջև բացահայտել տվյալ պահին իրեն հայտնի այն ապացույցները, որոնց նա հղում է կատարում որպես իր պահանջների և առարկությունների ապացուցման հիմք: Միաժամանակ, նույն հոդվածի 5-րդ մասով սահմանվեց, որ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն հղում կատարելու միայն այն ապացույցների նկատմամբ, որոնց հետ գործին մասնակցող մյուս անձինք ծանոթացել են նախօրոք:

Նշված իրավադրույթի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, գործին մասնակցող անձանց արգելում է գործի դատաքննության ընթացքում հղում կատարելու այն ապացույցներին, որոնք նախօրոք չեն բացահայտվել: Ընդ որում, այդ արգելքը վերաբերում է և՛ այն դեպքերին, երբ գործին մասնակցող անձը կրում է ապացուցման պարտականություն, և՛ այն դեպքերին, երբ ապացույցը ներկայացնելիս նման պարտականություն չկողող անձն իրականացնում է ապացույց ներկայացնելու իր իրավունքը: Նախօրոք (մինչև գործի դատաքննությունը սկսվելը) չբացահայտված ապացույցները, ընդհանուր կանոնի համաձայն, դատարանն իրավունք չունի ընդունելու, հետազոտելու և դնելու վճռի հիմքում:

Թերևս բացառություն է ՔԴՕ 48-րդ հոդվածի 8-րդ մասում կարգավորված իրավիճակը, երբ դատաքննությունն սկսվելուց հետո գործին մասնակցող անձը ներկայացնում է նախապես չբացահայտված լրացուցիչ ապացույցներ՝ հիմնավորելով իրենից անկախ պատճառներով մինչև դատաքննությունը սկսվելը նման ապացույցի ներկայացման անհնարինությունը: ՔԴՕ 48-րդ հոդվածի 8-րդ մասի բովանդակությունից բխում է, որ դատարանն իրավունք չունի ընդունել նախօրոք չբացահայտված ապացույցը, եթե այն ներկայացնողը չի մեկնավորի տվյալ ապացույցն իրենից անկախ պատճառներով ներկայացնելու անհ-

նարինությունը:

Ուշագրավ է, որ օրենքը պարտավորեցնում է բացահայտել այն ապացույցները, որոնց մասին գործին մասնակցող անձին հայտնի է եղել մինչև դատաքննությունը սկսելը: Բնականաբար, եթե ապացուցման պարտականություն կրող անձը չի իմացել ապացույցի գոյության մասին, կամ ապացույցը ձևավորվել է գործի դատաքննությունը սկսելուց հետո (օրինակ՝ պարտքի արտադատական ընդունման փաստը հաստատող փաստաթուղթը), ապա ապացույցը բացահայտելու պարտականության և այն չկատարելու հետևանքների վերաբերյալ կանոնները կիրառվել չեն կարող: Նման ապացույցները պետք է ընդունվեն դատարանի կողմից: Գտնում ենք, որ տվյալ հանգամանքն օրենքում պետք է հաշվի առնվեր և կարգավորվեր ուղղակիորեն:

Ապացույցները բացահայտելու հարցի իրավակարգավորումը թերի է նաև մեկ այլ առումով: Մասնավորապես, նախօրոք չբացահայտված ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտությունը կարող է ծագել դատաքննության ընթացքում դատավարական բնույթի առանձին հանգամանքների («դատավարական իրավիճակի») փոփոխության արդյունքում, օրինակ՝ երրորդ անձի վարույթ մտնելու, հակընդդեմ հայց հարուցելու, դատարանի կողմից լրացուցիչ ապացույցներ ընդունելու հետևանքով: Նման ապացույցները, անկասկած, պետք է ընդունվեն դատարանի կողմից, չնայած այն հանգամանքին, որ դրանք չեն բացահայտվել վաղօրոք, քանի որ նախ՝ կարող են հաստատել դատաքննությունը սկսելուց հետո վկայակոչված հանգամանքների դեմ ներկայացվող առարկությունների հիմքում ընկած հանգամանքները, երկրորդ՝ մինչև դատաքննությունը սկսելը դրանց ներկայացման անհրաժեշտություն չի եղել, երրորդ՝ դրանք չընդունելը կարող է դիտվել որպես դատական պաշտպանության իրավունքի կոպիտ ոտնահարում: Ուշագրավ է, որ սահամանելով գործին մասնակ-

ցող անձի պարտականությունը՝ մինչև դատաքննությունը գործին մասնակցող մյուս անձանց առջև բացահայտելու տվյալ պահին իրեն հայտնի և իր պահանջների ու առարկությունների հիմքում դրված հանգամանքները հաստատող ապացույցները, օրենքը «եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով» արտահայտությամբ վերապահում է կատարում, սակայն «այլ բան»-ի մասին օրենսգրքի որևէ նորմում խոսք չկա: Մինչդեռ ակնհայտ է, որ խոսքը վերը նշված դեպքերի մասին է:

Մեր կարծիքով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործի դատաքննությունը սկսելուց հետո երրորդ անձին վարույթ ներգրավելիս կամ հակընդդեմ հայցը վարույթ ընդունելիս կամ լրացուցիչ ապացույցը կողմից ընդունելիս դատարանը պետք է գործին մասնակցող մյուս անձանց ողջամիտ ժամկետ տրամադրի դրանց ծանոթանալու և առարկություններ նախապատրաստելու համար՝ այդ կապակցությամբ անհրաժեշտության դեպքում հետաձգելով դատական նիստը: Գերմանիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի օրինակով կարելի էր օրենսդրորեն սահմանել, որ «դատավարական իրավիճակի» փոփոխության պատճառով ապացույցներ ներկայացնելու անհրաժեշտության դեպքում գործին մասնակցող անձինք պարտավոր են մինչև գործով մոտակա դատական նիստը (գործի քննության հետաձգումից հետո դատաքննությունը վերսկսելը) գործին մասնակցող մյուս անձանց առջև բացահայտել տվյալ պահին իրենց հայտնի այն ապացույցները, որոնց վրա հղում են կատարում որպես իրենց առարկությունների ապացուցման հիմք¹⁵:

Ուշագրավ է, որ որպես ՔԴՕ 48-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում ամրագրված դրույթների տրամաբանական շարունակություն՝ օրենսդիրը հայցադիմումի պատասխանի բովանդակությունը կանոնակարգող նորմերում ամրագրում է, որ պատասխանողը պարտավոր է հայցադիմումի պատասխանին կից ներկայացնել իր տի-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

րապետման ներքո գտնվող բոլոր հնարավոր գրավոր և իրեղեն ապացույցները, որոնք հաստատում են իր պնդած փաստերը, եթե նա կրում է դրանց ապացուցման պարտականությունը, և եթե այդ ապացույցները հնարավոր է կցել պատասխանին, ինչպես նաև հայցադիմումի պատասխանը և կից փաստաթղթերը հայցվորին և գործին մասնակցող այլ անձանց ուղարկելը հավաստող ապացույցները (ՔԴՕ 95 հոդվ., մաս 3): Տվյալ նորմի գոյությունը ողջունելի է, սակայն, եթե այն համեմատում ենք ՔԴՕ 88 հոդվածի 1.1 մասի հետ, որը հայցվորին վերապահում է հայցադիմումին պահանջը հաստատող ապացույցներ կցելու *իրավունք*, ակնհայտ է դառնում քննարկվող հարցը կանոնակարգելիս օրենսդրի թույլ տված անհետևողականությունը: Գործող իրավակարգավորումը, մեր կարծիքով, հակասում է կողմերի դատավարական իրավահավասարության սկզբունքին, քանի որ հայցվորին վերապահում է ավելի արտոնյալ պայմաններ և պատասխանողին զրկում է հարուցված հայցի դեմ պաշտպանվելու լիարժեք հնարավորությունից: Չէ՞ որ հայցադիմումի պատասխանը նախապատրաստվում է հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջների, դրանց հիմքում դրված հանգամանքների և վերջիններս հաստատող ապացույցների ուսումնասիրության հիման վրա: Առանց ապացույցներին կամ դրանց մասին ծանոթանալու կազմված և դատարան ներկայացված պատասխանը, բնականաբար, թերի կլինի և կունենա լրացման կարիք: Ուստի գտնում ենք, որ օրենսդիրն այս հարցում պետք է անհրաժեշտ հետևողականություն ցուցաբերեր և հայցվորին ևս պարտավորեցներ հայցադիմումին կից ներկայացնել իր տիրապետման ներքո գտնվող բոլոր հնարավոր գրավոր և իրեղեն ապացույցները, որոնք հաստատում են իր պնդած փաստերը, եթե, ի-

հարկե, հայցվորն է կրում դրանց ապացուցման պարտականությունը:

Օրենքը հստակորեն չի սահմանազատում «ապացույցի բացահայտում» և «ապացույցի ներկայացում» հասկացությունները: Հարցեր են առաջանում՝ արդյո՞ք «ապացույցի բացահայտում»-ը ենթադրում է նաև դրա ներկայացում գործին մասնակցող մյուս անձանց և դատարանին, կարելի՞ է արդյոք խոսել ապացույցը բացահայտված լինելու մասին, եթե դրա գոյության մասին կողմը հիշատակել է մինչև դատաքննությունը սկսելը, սակայն դրան ծանոթանալու հնարավորություն դատարանը և գործին մասնակցող մյուս անձինք չեն ունեցել:

Կարծում ենք, որ առաջադրված հարցին պետք է պատասխանել ապացույցի հասկացությունը սահմանող դրույթի լույսի ներքո: ՔԴՕ 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով ապացույցներ են ՔԴՕ-ով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճը լուծելու համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդպիսի տեղեկությունների բացահայտումը ենթադրում է դրանց բովանդակությունը դատարանին և գործին մասնակցող անձանց մատչելի դարձնելուն ուղղված գործողությունների կատարում: Հետևաբար, ապացույցի բացահայտման մասին կարելի է խոսել բացառապես այն դեպքերում, երբ այն ներկայացվել է դատավարության սուբյեկտներին:

Ապացույցի բացահայտման ապացույցի ներկայացում չի կարող դիտարկվել միայն այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է գործին մասնակցող անձանց և վկաների կողմից իրենց ցուցմունքների շրջանակներում դատարանին հաղորդվող տեղեկությունների մասին: Այնքանով, որքանով հարցը վերաբերում է ապացույցների

նշված տեսակներին, կարելի է ասել, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում «ապացույցի բացահայտում»-ը դրա ներկայացում չի ենթադրում¹⁶: Բանն այն է, որ նշված ապացույցները, դրանց բնույթից ելնելով, դատարան կարող են ներկայացվել բացառապես դատական նիստում: Մասնավորապես, մինչև դատական քննությունը գործին մասնակցող անձինք դատավարական փաստաթղթերում կամ նախնական դատական նիստում գործի փաստական հանգամանքների մասին տալիս են բացատրություններ, որոնք ապացույցներ չեն հանդիսանում: Գործով ապացույց են համարվում նրանց կողմից ՔԴՕ 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով դատական նիստում տրված ցուցմունքները: Նույն կերպ էլ վկայի ցուցմունքը չի կարող նախապես ներկայացվել դատարան, քանի որ վկան, ըստ գործող օրենսդրության, կարող է հարցաքննվել բացառապես դատական նիստում: Ուստի, ՔԴՕ 48-րդ հոդվածում ամրագրելով գործին մասնակցող անձանց ապացույցները բացահայտելու պարտականությունը և ներկայացվող ապացույցներին նախօրոք ծանոթանալու կողմերի իրավունքը՝ օրենսդիրը նկատի ունի, որ գործին մասնակցող անձը պարտավոր է մինչև դատաքննությունը դատարանի և գործին մասնակցող մյուս անձանց սպառիչ կերպով տեղեկություններ հաղորդել գործի տվյալ պահին իրեն հայտնի հանգամանքների մասին, որոնց վերաբերյալ ինքը կամ հակառակ կողմը հետազայում կարող է հարցաքննվել, ինչպես նաև այն վկաների մասին, որոնք կարող են հաստատել գործի համար նշանակություն ունեցող որոշակի հանգամանքներ: Տվյալ ապացույցները գործը դատաքննության նախապատրաստելու ընթացքում չբացահայտելը գործնականում գործին մասնակցող անձին զրկում է գործի դատաքննության ընթացքում դրանք վկայակոչելու հնարավորությունից: Այսպիսով, ընդհանուր կանոնի համաձայն, ապացույցները վկայակոչելը բավա-

րար չէ դրանք բացահայտված համարելու համար: Դրանք պետք է ներկայացվեն դատարանին և գործին մասնակցող անձանց: Դատավարական օրենսդրությունը պարունակում է ապացույցների բացահայտման ապահովմանն ուղղված մի շարք նորմեր: Օրենքը պարտավորեցնում է դատարանին հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի, ինչպես նաև հայցադիմումի լրացման պատճեններն ուղարկել պատասխանողին (ՔԴՕ 93 հոդվ., մաս 1, 149⁷ հոդվ., մաս 2), այն դեպքում, երբ հայցադիմումին կից փաստաթղթերը ծավալուն են կամ դրանք դժվար է պատճենահանել, գործին մասնակցող այլ անձանց ծանուցել և հնարավորություն տալ դրանց ծանոթանալու (ՔԴՕ 93 հոդվ., մաս 2, 149⁷ հոդվ., մաս 2): Պատասխանողը պարտավոր է հայցադիմումի, փոփոխված հայցադիմումի պատասխանը և կից փաստաթղթերն ուղարկել հայցվորին և գործին մասնակցող այլ անձանց՝ այդ մասին ապացույցները կցելով դատարան ներկայացվող պատասխանին (ՔԴՕ 95 հոդվ., մաս 3, կետ 2, 149⁷ հոդվ.)¹⁷: ՔԴՕ 149⁸ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ դատարանը նախնական դատական նիստում ապացուցման պարտականությունը բաշխելուց հետո իրավունք ունի սահմանելու ապացույցները ներկայացնելու ժամկետը: Այս կանոնն էլ իր հերթին ակնհայտորեն ուղղված է այն դեպքերին, երբ ապացույցները վկայակոչված են, սակայն դեռևս ներկայացված չեն ո՛չ դատարանին և ո՛չ էլ գործին մասնակցող անձանց կամ նրանցից մեկին:

Ամփոփելով շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ ներկայումս գործող քաղաքացիական դատավարական օրենսդրությունը պահանջում է ապացույցները վկայակոչել և գործին մասնակցող անձանց ու դատարանին ներկայացնել (բացահայտել) մինչև գործով դատաքննությունը սկսվելը: Այն բացառիկ դեպքերում, երբ դատարանն ընդունում է դատաքննությունն սկսվելուց հետո գործին մասնակցող անձի ներկայացրած ապացույցը, դրան նախօրոք ծանոթա-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Նախու և դրա դեմ առարկություն նախապատրաստելու գործին մասնակցող անձանց իրավունքներն ապահովելու նկատառումներից ելնելով՝ դատարանը պարտավոր է ապացույցին ծանոթանալու համար գործին մասնակցող անձանց տրամադրել ողջամիտ ժամկետ¹, եթե նրանք այդ ապա-

ցույցը նախապես ստացած չեն լինում (ՔԴՕ 48 հոդվ., մաս 8): Գործը դատաքննության պատշաճորեն նախապատրաստված լինելու մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները հաստատող ապացույցները ոչ միայն վկայակոչված են, այլ նաև ծանոթ են դատարանին և գործին մասնակցող բոլոր անձանց, այլ կերպ ասած՝ բացահայտված են:

¹ ՔԴՕ 48-րդ հոդվածի սկզբնական խմբագրությամբ ամրագրված կանոնն այն մասին, որ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում դրված հանգամանքները, մեր կարծիքով, շատ ավելի հաջողված էր: Բանն այն է, որ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված և ներկայումս գործող ձևակերպումը կարող է սխալ պատկերացում կազմել, թե կողմը պարտավոր է ապացուցել բացառապես այն հանգամանքները, որոնք ինքն է վկայակոչել: Մինչդեռ, ինչպես նշել ենք ապացուցման առարկային վերաբերող նախորդ շարադրանքում, ապացուցման առարկան որոշելիս դատարանը ղեկավարվում է ոչ միայն կողմերի վկայակոչած հանգամանքներով, այլ նաև նյութական իրավունքի նորմի (նորմերի) բովանդակությամբ և անհարժեշտության դեպքում կարող է ապացուցման առարկայի մեջ ներառել այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք կողմերը չեն վկայակոչել, բայց գործի լուծման համար ունեն էական նշանակություն: Հարց է ծագում ո՞վ պետք է ապացուցի նման հանգամանքները: Օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու դատարանի պարտականության բացակայության պայմաններում կարելի է միանշանակ պնդել, որ դատարանի նախաձեռնությամբ ապացուցման առարկայի մեջ ներառված հանգամանքները ևս պետք է ապացուցեն կողմերը, ավելի ճիշտ՝ այն կողմը, որի պահանջը կամ առարկությունը հիմնավորում է տվյալ հանգամանքը: Ասվածը հաշվի առնելով գտնում ենք, որ ՔԴՕ 48-րդ հոդվածի 1-ին մասում ավելի ճիշտ կլիներ սահմանել, որ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր պահանջների և առարկությունների հիմքում ընկած հանգամանքները:

² Տե՛ս **Баулин О.В.** Время доказывания при

разбирательстве гражданских дел. Дисс. докт. юрид. наук. - М., 2005, էջ 149:

³ Բացառությունները վերաբերում են այն դեպքերին, երբ գործի քննության ընթացքում հարուցվում է հակընդդեմ հայց, վարույթ է մտնում երրորդ անձ, դատակից, կամ ներկայացվում են լրացուցիչ ապացույցներ, որոնք գործին մասնակցող անձն իրենից անկախ պատճառներով չի ներկայացրել մինչև դատաքննությունը սկսվելը (դրանց բացակայության, դրանց մասին չիմանալու, ներկայացնելու անհրաժեշտության բացակայության և այլ օբյեկտիվ պատճառներով):

⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս **И.В. Решетникова.** Доказательственное право Англии и США. — М.: «Городец», 1999, Гл. 2, §2.5, §2.6, **Треушников М.К.** Судебные доказательства. - М., 2004, Гл. 3, §1:

⁵ Ըստ գործող ՔԴՕ-ի՝ հայցադիմումը, հայցադիմումի պատասխանը, լրացուցիչ հայցադիմումը, դրա դեմ ներկայացված պատասխանը, գործին մասնակցող անձանց այլ առարկությունները դատարանի կողմից պետք է ընդունվեն նաև այն դեպքերում, երբ դրանց հիմքում դրվել են օրենքով չարժևորվող հանգամանքներ կամ անհրաժեշտ հանգամանքների մի մասը: Հայցադիմումը վերադարձնելու հիմքերի թվում ՔԴՕ 92-րդ հոդվածում դիտարկվում է բացառապես այն իրավիճակը, երբ ներկայացված հայցն ընդհանրապես չի պարունակում հողում այն հանգամանքներին, որոնք դրվում են հայցապահանջների հիմքում: Ուշագրավ է, որ տվյալ հիմքով հայցադիմումների վերադաժման դեպքերը պրակտիկայում գրեթե չեն հանդիպում, քանի որ պահանջ ներկայացնելիս հայցվորներն ինչ-որ (թեկուզև անհեթեթ) հանգամանքների վրա հենվում են, իսկ օրենքը վերջիններիս բնույթին որևէ հատուկ պահանջ չի առաջադրում:

⁶ Տե՛ս *Треушников М.К.* Судебные доказательства. - М., 2004, էջ 58:

⁷ Նման կարծիք է հայտնել Օ.Վ. Բաուլինը: Տե՛ս *Баулин О.В.* Бремя доказывания при разбирательстве гражданских дел. Дисс. докт. юрид. наук. - М., 2005, էջ 150:

⁸ Տե՛ս **ՀՀ սահմանադրական դատարանի 08.12.2009 թ. թիվ ՍԴՈ-845 որոշումը** «Քաղաքացի Նարինե Սահակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով»:

⁹ Բացառություն են կազմում դատարանի նախաձեռնությամբ բացառիկ դեպքերում վկա կանչելու (ՔԴՕ 44 հոդվ., մաս 2) և փորձաքննություն նշանակելու (ՔԴՕ 60 հոդվ., մաս 1) դեպքերը: Ի դեպ, եթե դատարանի նախաձեռնությամբ փորձաքննություն նշանակելու հնարավորություն նախատեսելն ունի օբյեկտիվ պատճառներ (փորձաքննությունը հատուկ գիտելիքների օգտագործմամբ գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ և դրանք հաստատող ապացույցներ հետազոտելու եղանակ է), ապա դատարանի նախաձեռնությամբ (կողմերի կամքից անկախ) վկա կանչելու լիազորությունը մրցակցային դատավարության պայմաններում հիմնավորված չի թվում, առավել ևս, որ օրենքը չի բացահայտում «բացառիկ դեպքեր» արտահայտության իմաստը: Կարծում ենք, որ տվյալ լիազորությունը պետք է վերացվի կողմերի մրցակցությունը և իրական իրավահավասարությունն ապահովելու նկատառումներով: Ապացուցման պարտականությունը ոչ պատշաճորեն կատարելու անբարենպաստ հետևանքների ռիսկը պետք է կրի բացառապես այն սուբյեկտը, որի վրա օրենքը դնում է այդ պարտականությունը:

¹⁰ Ասվածը, իհարկե, չի վերաբերում վարչական դատավարությանը: Նկատի ունենալով հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի առանձնահատկությունները՝ ՎԴՕ 6-րդ հոդվածը սահմանում է, որ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնն («ex officio») և վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորե-

լու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես՝ պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

¹¹ Տե՛ս *Պետրոսյան Ռ. Գ.*, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 3-րդ հրատ., - Եր., Երևանի համալս. հրատ., 2007, էջ 181:

¹² Տե՛ս *Гойденко Е. Г.* Неправильное определение обстоятельств, имеющих значение для дела, как основание для отмены судебного решения // Российский судья, 2009, N 8 // www.juristlib.ru/book_5458.html

¹³ Այդ մասին մանրամասն տե՛ս, օրինակ՝ *Веденеев Е. Ю.* Роль суда в доказывании по делу в российском гражданском и арбитражном судопроизводстве // Арбитражный и гражданский процесс, 2001, N 2, *Шамшурин Л.* О диспозитивности и злоупотреблении процессуальными правами в состязательном процессе в сфере гражданской юрисдикции: вопросы теории и практики // Арбитражный и гражданский процесс, 2009, N 12, *Макаров П.* Механизм концентрации процессуального материала как судебный инструмент по обеспечению своевременного разрешения судебных споров (опыт Германии) // Арбитражный и гражданский процесс, 2009, N 10,11,12, *Лим А. А.* Некоторые проблемы института раскрытия доказательств в арбитражном процессе // Журнал российского права, 2007, N 8, *Архипова Ю. В.* Раскрытие доказательств в гражданском процессе Англии и США // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения, 2010, N 3, *Фильченко Д. Г.* Современные проблемы подготовки дела к судебному разбирательству в арбитражном процессе Российской Федерации. Дис. ... к.ю.н. - Воронеж, 2005, *Шилов А. В.* Подготовка дела к судебному разбирательству в арбитражном процессе. Дис. ... к.ю.н. - Томск, 2004:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ**ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

¹⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 28.11.2007 թ. ՀՀ օրենքը // ՀՀՊՏ 66(590), 26.12.2007:

¹⁵ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Макаров П.** Механизм концентрации процессуального материала как судебный инструмент по обеспечению своевременного разрешения судебных споров (опыт Германии) // Арбитражный и гражданский процесс, 2009, N12 // www.juristlib.ru/book_5431.html

¹⁶ Թերևս դա կարելի է համարել այն բացառություններից մեկը, որոնց մասին ակնարկվում է ՔԴՕ 48-րդ հոդվածի 4-րդ մասում:

¹⁷ Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ պատասխանողին պարտավորեցնելով պատասխանի հետ մեկտեղ դատարանին և գործին մասնակցող անձանց ներկայացնել առարկությունները հաստատող բոլոր հնարավոր գրավոր և իրեղեն ապացույցները, օրենքն անհարժեշտ հստակությամբ չի սահմանում դրանք չներկայացնելու հետևանքները: Պարզ չէ, թե նման դեպքերում ինչպես պետք է վարվի դատարանը: Որպես հայցադիմումում վկայակոչված հանգամանքների ընդունում դա դիտարկվել չի կարող, քանի որ ՔԴՕ 95-րդ հոդվածի 5-րդ մասը դատարանի տվյալ հայեցողական լիազորության իրականացման հնարավորությունը կապում է բացա-

ռապես այն դեպքերի հետ, երբ պատասխան ընդհանրապես չի ներկայացվում կամ ներկայացվում է սահմանված ժամկետի խախտմամբ: Պատասխանը վերադարձնելու հնարավորություն օրենքով նախատեսված չէ, ուստի այն չի կարող վերադաձվել: ՔԴՕ 149⁸ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի բովանդակությունից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ նախնական դատական նիստում դատարանը կարող է սահմանել ապացույցները ներկայացնելու ժամկետ: Սակայն ակնհայտ է, որ դա ևս լուծում չէ՝ նկատի ունենալով, որ նախնական դատական նիստ կարող է չիրավիրվել: Իսկ ինչպե՞ս վարվել նման դեպքերում: Կարծում ենք՝ հարցն օրենսգրքի շրջանակներում պետք է խիստ որոշակի հայեցակարգային լուծում ստանա:

